

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, ՅՈՒՆՈՒԱՐ 14, 1932

ԹԻԻ 23-24

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«Նոր Աւեսաբեր» Հիմնադրութեան քի առդիապատես
ՀՈԳԵՒՈՐ

Տ. ձ. Խ.

Ծնունդի պատգամ մը
Տարեդարձի Մ'առքիւ
Առաւել Մեծ Գործեր
Երկ Յիսուս Ծնած Չըլլար
Յուսածին Տառապանք
Դեպ ի Վեր
Ս. Դիրքը

Թրգ. Յ. ՄԸՍՐԼԵԱՆ
Վեր. Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Թրգ. ԵՍ. Տ. ՄԿՐՏԻՉԵԱՆ
Թրգ. Ե. Տ. Մ.
Հ. Յ.
ԿԻԼՊԵՐԹ ԹՈՓԱԼԵԱՆ
Հ. Բ. ՊՈՒԹՀ

ՊԱՏՄԱԿԱՆ

Մարդկային Հունձք
Հռովմ
Մեծ Դեմքեր եւ դեպքեր

Տ. Ս. ձ.

* * *

ԳԻՏԱԿԱՆ

Երկուստեակներ
Դիտական Քրոնիկ
Հսկայ Մողեսը

ՏՈՔԹ. Ա. ՃԷՊԷՃԵԱՆ
ԲԱՂԵՅ՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ
* * *

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Թովմաս Ալվա Էսիսըն

ՅՐ. ՄԸՍՐԼԵԱՆ

ԱՅԼ ԵՒԱՅԼ

Մեծն Նաբոլեոնի Դիրքերը
Մարդկային Տիպեր

* * *

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

ՐԱՅՅԻ ՏԻՔԻՃԵԱՆ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԴՈՒՆԻ ՀԱՆԷՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Արսունսէր՝ Վեր. Կ. Յարութիւնեան
Խմբագիր՝ Տիգրան Ճ. Խոյոքեան

Կը հրատարակուի ամիսը երկու ան-
գամ, տարեկան բաժնեգրին է 150 դրու-
մով. Սուրբոյ համար, և մէկ աւ կէս
տարւո՝ ուրիշ բաժնեգրներու համար:

Յօդուածներու բնագիրները չեն զըր-
կուիր եթէ այդ մասին փափաք չյայտ-
նուի յօդուածագիրներու կողմանէ. չը-
բատարակուող յօդուածներու համար
պէտք է զրկել փաստի ծախսը:

Յօդուածները պէտք է գրուին թուղ-
թին մէկ էջին վրայ մեկանով, գիւրդն-
թեռնի մաքուր կերպով:

USUՑԱՆՔ

THE ARMENIAN STUDENT Ի, Ամերի-
կայի Հայ Ուսանողական Միութեան օր-
կանի, Գ. տարուան առաջին թիւը:
Թերթս կը հրատարակուի տարին
չորս անգամ տարեկան բաժնեգիրն է
մէկ տուար, 11 West 42 Street, New
York, Room 2485:

ԲԱՑԱՌԻԿ ԹԻԻ, հրատարակութիւն
Միւսանի Հայ Ուսանողական Միութեան,
գիրն է իտալական հինգ լիւրէթ: Unione
Studenti Armeni, Via Amperè 40,
Milano:

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ ԿԸ ՆՈՒԻՐԷ

ԼՕԶԱՆԷՆ (Զուլցերիա) Տիար Յ. Ս.
Ֆէրմանեան մէկ տարուան Նոր Աւետար-
բեր կը նուիրէ Տիկ. Աննա Տոնիկեանի,
Պուէնոս Այրէս:

ԿԸ ՓՆՏՈՒԻՆ

Սարգիս Նալպանտեան կը փնտռէ իր
քոյրը Ակիւլինէ և քեռայրը Սպարթացի
Սարգիս Կիւլպահարեանը, եւ ասոնց
ղաւակները Նիկողոս, Հոռոփիկ և Գար-
րիէլ օրոնք Տէր Զօրի մէջ Արաբի մը
կողմէ որդեգրուած են: Տիկ. Ակիւլի-
նէ վերջերս Բուս Գալէի մօտերը ահա-
ւած է:

Կը խնդրուի իմացնել ետեւեալ հաս-
ցէին.

Sarkis Nalbandian

c/o Margos Sdepanian

29 Rue Gazali, Alexandria, Egypt.

Հալէպի մօտ Պապ քաղաքի թէլ Հի-
ճա գիւղին մէջ կորսուած է ութ տարե-
կան Հայկանոյշ Ստեփանեան, որուն
հայրն է դերձակ Ստեփան և մայրը՝ Սա-
թենիկ: Փնտռողն է Մարկոս Ստեփան-
եան 29 Rue Gazali, Alexandria, E-
gypt.

ՅԱԶՈՐԴ ԹԻԻԸ

«ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ» Ի Ե. տարուան առաջին թիւին մէջ յօդուածներ ունին՝
Փրոֆ. Յ. Թ. Գալսեան, Փրոֆ. Զ. Ա. Պեգնեան, Փրոֆ. Լ. Լեւոնեան, Վեր. Մ. Կ.
Փափագեան, Վեր. Հ. Հ. Րիկզ, Վեր. Կ. Սրանպոյրեան, Վեր. Ե. Բասունի, Վեր. Հ.
Խանդանուր և այլն:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 14 ՅՈՒՆՈՒԱՐ, 1938

ԹԻԻ 23-24

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ» ԱՐԴԻՒԱՊԱՇՏ Է ԹԷ ՀԻՄՆԱՊԱՇՏ

Այսպէս կը հարցնեն մեզի: Վերջապէս ամերիկեան այս ամբարձր մեր մէջ ալ ներմուծուեցաւ արուեստականօրէն, քանզի ան մեր կեանքի պայմաններուն ծնունդը չէ, անկախ մեզի բնորոշ ռուսարէ: Մատընիսթ (ադրապաշտ) և Ֆլենսմէնթէլիսթ (հիմնապաշտ) բառերը նոյնիսկ մեր անգլերապէսներուն ծանօթ եղած են: Կարգ մը մարդոց համար հաճելի ըլլալ կը թաւի քրիստոնեաները, եկեղեցիները և եկեղեցականները երկուսի բաժնէլ, մէկը արդիապաշտ իսկ միւսը հիմնապաշտ կոչել և մէկին գրողին տակ զիրք բռնել, աւ միւսին դէմ պատերազմ հռչակել՝ առանց յաճախ գիտնալու թէ ինչ կը նշանակեն իրենց գրողը զարգարող այս բառերը:

Մարդոց գաղափարներուն մէջ կատարեալ անորոշութիւն մը կայ այս երկու բառերու իմաստին, զանոնք իրարմէ բաժնող գիծին, անոնց տարբերութեանց մասին: Մենք նպատակ չունինք այս բաներու մասին խօսիլ: Բայց բաւ է հոս յիշել թէ այս երկու հոսանքներու հակամարտութիւնը զլիսաւորապէս կը դառնայ Ս. Գիրքի, Յիսուսի ծնունդին, Անոր փրկագործութեան, յարութեան, երկրորդ գալուստին, և անձնաւորութեան մասին եղած գաղափար-

ներուն շուրջ: Այս երկու խումբի մարդիկ ալ իրենց տեսակէտներուն ճշմարտութիւնը ցուցնելու համար Ս. Գիրքին մէջէն և երբեմն դուրսէն՝ իրենց կարծիքներու աշխարհէն, պատմութիւնէն և գիտութիւնէն փաստեր կը գտնեն: Եւ ինչ որ յատկանշական է սա է որ յաճախ մէկը կամ միւսը իր տեսակէտը, իր աստուածային բացարձակ պատգամ տարիչներու վրայ պարտադրելու ջանքեր կ'ընէ: Մենք արգահատաւքով կը գիտենք այս պարագան:

Շատ մը մարդոց համար քրիստոնէութիւնը կը նշանակէ անոր մասին միայն իրենց աւելցած գաղափարները, միայն իրենց կրօնական փորձառութիւնը: Իրենց եկեղեցին միայն քրիստոնէական է, իրենց խորհածները, դաւանածները, պաշտամունքի ձևերն ու սովորութիւնները միայն քրիստոնէական են: Քրիստոնէութիւնը, սակայն, բոլոր անհատներու և բոլոր կրօնական կազմակերպութեանց, — ըլլա՞յ կաթոլիկ և Արեւելեան կամ Աւետարանական եկեղեցի մը, ըլլա՞յ կրօնական եզրայրութիւն կամ քրիստոնէական շարժում մը — զատ զատ իւրաքանչիւրէն և հաւաքաբար բոլորէն ալ վեր և մեծ է: Ոչ մէկ միաք, ոչ մէկ կեանք, ոչ մէկ հոսանք, ոչ մէկ եկեղեցի առանձնաբար

չի կրնար Բրիտտոսի կեանքը իր մէջը պարունակել բոլորովին, և անոր միակ, ուղղափառ, լման արտայայտիչը և ներկայացուցիչը ըլլալ: Բրիտտոսի կեանքը այնքան ընդարձակ, այնքան բազմակողմանի և բազմերանգ է որ Պօղոս Առաքեալէն սկսեալ մինչև Մուտի, Ս. Օգոստինոսէն սկսեալ մինչև Ուէսլի, Սկիբերանէն մինչև Շնորհալի, Սատու Սունտար Սինկէն մինչև Քակաւա, Խրիմեան Հայրիկէն մինչև Փրոֆ. Ս. Լեոնեան, ամէկ մէկ հոգեւոր փորձառութիւն և կրօնական գաղափար հազիւ Անկէ փոխ առնուած տկար շող մը կը ներկայացնէ: Բրիտտոսի կեանքը անպարփակելի է:

Հետեւաբար «Նոր Աւետարներ» ոչ արդիապաշտ է և ոչ հիմնապաշտ, քանզի ոչ Արդիապաշտութիւնը եւ ոչ Հիմնապաշտութիւնը քրիստոնէութեան կրնայ հաւասարիլ: Ասոնց երկուքն ալ մարդկային փորձառութեան, մարդկային մտքին ծնունդ են և իբր այդ պէտք է գնահատուին: Ասոնցմէ իւրաքանչիւրը, ինչպէս նաեւ ուէզ գաղափար, ուէզ փորձառութիւն, ուէզ կազմակերպութիւն այնքան արժէք ունի որքան որ ան կրնայ միջոց մ'ըլլալ մարդերը Բրիտտոսի առաջնորդելու, Բրիտտոսի կեանքը մարդոց մէջ մարմնացնելու: Ս. Գիրք եւ Բրիտտոս կան ու կը մնան, բայց մարդոց ըմբռնումները անոնց մասին կըրնան փոխուիլ, կրնան ընդարձակուիլ: Մարդկային փոփոխական է և անցաւոր, իսկ Աստուածայինը՝ անփոփոխ և յաւիտենական: Անոնց մասին մեր այս ըմբռնումներուն մէջ մենք կրնանք սըխալիլ, և այս շատ բնական կերպով իր վիստակար ազդեցութիւնը պիտի ունենայ մեր հոգեւոր կեանքին վրայ: Հետեւաբար մեր գաղափարները մեծ կշիռ մ'ունին մեր կեանքը որոշելու մէջ: Բայց մեր կեանքին բախտորոշ ազդակը Բրիտ-

տոսի հանդիպ մեր ունեցած դիրքն է: Եթէ մենք բոլորանուէր և մշտնջոժար գլուխունք և ամէն գինով ջանանք Անոր հաւատարիմ և հնազանդ գտնուելու՝ Ս. Հոգին, ներքնակեալ Լոյսը, մեզ պիտի առաջնորդէ ճշմարտութեան:

Ուրեմն՝ եթէ պէտք է անպատճառ անուն մ'առնել կ'ուզենք յայտարարել թէ մենք ո'չ հիմնապաշտ և ո'չ արդիապաշտ, այլ միայն ու միայն Բրիտտոսապաշտ ենք: Մեր սուղ էջերը չեն ներեր հոս ըսելու թէ ինչպէս կ'ընդունինք Բրիտտոսը: Բաւ է միայն յիշել թէ մենք կ'ընդունինք Բրիտտոսը աչպակաւ և ոչ տարբեր անկէ որ Աւետարաններու մէջ մեզի ներկայացուած և յայտնուած է: Բրիտտոսեայ ըլլալ չինըշանակեր այս կամ այն կրօնական և գաղափարի հոսանքին յարիլ, այլ իր մէջը Բրիտտոսն ունենալ: Մենք ամէն մէկ հոսանք կամ շարժում, ամէն գաղափար կամ կազմակերպութիւն կը յարգենք և կը գնահատենք այնքան, որքան որ այն լոյս կուտայ յաւիտենական Բրիտտոսի մասին: Կը վերջացնենք՝ հոգարձեալ կրկնելով ինչ որ քանիցս առիթը աւանդանք ըսելու թէ՝ մեր անհատական և հաւաքական կեանքին մէջ կը կարօտինք աւելի Բրիտտոսի: Մեր հարցը արդիապաշտի և հիմնապաշտի վէճը չէ, այլ՝ Բրիտտոսագուրկ կեանքը: Բոլոր մարդիկ Բրիտտոսի մէջ կը միանան, և եթէ քրիստոնեաները իրարու դէմ ճակատ կը կազմեն և զիբար չեն հասկնար պատճառ մէկ կամ միւս կողմին մէջ կամ երկու կողմերուն մէջ Բրիտտոսի պակասութիւնն է:

Տ. Ճ. Խրիստեան

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՈՒՆՁՔԸ

Դրեց՝ David Starr Jordan

Science News Letter գիտական շաբաթաթերթը իր ամեն քիչին մեջ կը հրատարակէ գիտական դասական կտորներ հին եւ նոր հեղինակներէ։ Իր այս տարւան Հոկ. 31ի քիչին մեջ կը հրատարակէ DR. Jordan ի 1906 ին Ամերիկեան Փիլիսոփայական Ընկերութեան համար գրած մեկ գրութիւնը, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՈՒՆՁՔԸ խորագրով։ DR. Jordan եղած է յայտնի խաղաղասէր մը եւ մեռած է հերոս Սեպ. 19 ին։ S. N. Letter րէրքը իր դասականներու սիւնակը կը բանայ «Պատերազմը, Մարդկութեան Կործանիչը» վերստնաթանկը։

Ծ. ԽՄԲ.

Դիտութիւնը դասաւորուած իմաստութիւն է։ Անիկայ իբր գիտութիւն հանչողուած է իր կանոնաւոր դասաւորութեամբ։ Բայց դասաւորութի բոլոր հարցերէն անդին և վեր գիրք պէտք է գրաւէ իմաստութիւնը ինքը։ Իմաստութիւնը մարդկային փորձառութեան հոգին է։ Բնութեան կանոններուն հետ մտքին շփումն է։ Պ. Ֆրանգլին իր ժամանակակից բոլոր մարդերէն գերազանցօրէն աւելի իմաստութեան մարդ մըն էր։ Նոյն կերպով՝ գիտութեան առաջին առաջնորդն էր Ամերիկայի մէջ, և տակաւին իր գիրքը կը գրաւէ մեծագոյններուն մէջ...

Պ. Ֆրանգլին անգամ մը ըսաւ. «Բոլոր պատերազմները դէշ են. ոմանք միւսներէն աւելի դէշ են» Առիթով մը դարձեալ, աւելի բաց բառերով, խաղաղութեան վրայ ձգուած պատերազմի մութ ստուերին և պատրաստ բանակին չարիքին ակնարկելով Ֆրանգլին՝ Պայնիզի ըսաւ.

«Եթէ միայն մէկ պետութիւն իր բանակը պղտրիկցնէր, միւս բոլոր ազգերը անոր վրայ պիտի խուժեն։ Այ-

սու հանգերձ ես կը խորհիմ թէ բանակը ազդեցութիւն մը ունի, որ ժամանակին զգացուելու է այդ կազմակերպութեան ջնջումը յառաջ բերելու համար։ Բանակ մը ոչ միայն երկրի մը բնակչութիւնը, այլ նաեւ մարդկային ցեղին մեծութիւնը և ծնունդները կը նշագրէ։ Բանակ բանակ մը ազդին ծաղիկն է։ Բոլոր կենսունակ, զօրաւոր, բարեկամ մարդերը բանակին մէջ կը գտնուին, և ասանք ընդհանրապէս չեն ամուսնանար»

Պատերազմող և պարտուող բանակներու համար ասիկայ աւելի շիտակ է. քանզի ինչպէս որ Ֆրանգլին կ'ըսէր նորէն, «Պատերազմներու փնտնելը պատերազմի ժամանակ չեն հատուցուիր, պարտքի հաշիւը վերջէն կուգայ»։

Ատենոք մեծ թագաւոր մը կ'ապրէր, և իր իշխած ազգը կը բնակէր լեռնաշղթայի մը կողերուն վրայ, զեղեցիկ սարերու և կանանչ ու բերրի հովիտներու մէջէն տարածուելով մինչև Միջերկրական Ծովը. և իր ցեղին այս գեղեցիկ, զօրաւոր, ինքնավստահ, քաջ և գործօն մարդերը այնպիսի տնհատներ էին, «որոնց անձանթ էր ունէ պէտք մը զոր չկարենային զոհացնել իրենց համար»։ Անոնք ոչ մէկուն իրենք զիրենք օտորագաս կը նկատէին։ Տիրերի և Արհնին լեռներու այս երկրագործները իրենք զիրենք կատարելապէս կարող և յարմար կը նկատէին բոլոր բաներուն համար զոր մարդիկ կրնային ընել։ Անոնք իրենք զիրենք կը կոչէին Վիր (vir, որ կը նշանակէ այր մարդ, Ծն. խմբ.) և մինչև այսօր իրենց պէս եղող մարդերը կը կոչուին Վիրիլ (virile = առնական, քաջ). տկարներն աւ զերիններն էին որ պատերազմ

քով խոնուած էին, քաջ մարդն էր ար-
զաւակներ ունեցաւ: Ամէն սերունդի
մէջ եւ սերունդէ սերունդ մարդկային
հաւնձքը լաւ էր: Եւ մեծ իմաստուն
թագաւորը որ ասոնց վրայ կ'իշխէր...
բայց պատմութիւնս հոս դադար կ'առ-
նէ, քանզի թագաւոր մը չկար: Եւ չէր
կրնար ըլլալ: Քանզի գրուած է թէ
մարդ կոչուելու արժանի մարդեր, մար-
դիկ որոնք վիրեր են, «ա՛յնքան ինքնա-
կամ, ա՛յնքան անկախ ա՛յնքան ինք-
նակեղորուն են որ, իրենք իրենցմէ զատ
ուէ մէկուն նշանէ չեն կրնար կատա-
վարուիլ»: Թագաւորները տկարներու
համար են, և ոչ՝ մարդերու համար: Ազատ
ծնած մարդիկ իրենք կ'որոշեն
իրենց բազդը: «Յանցանքը մեր աս-
դերուն մէջ չէ, այլ մե՛ր մէջ որ մենք
ստորագասներ ենք»: ...Ազատու-
թեան ոգին իրենց ծանօթ միակ իշ-
խանն էր, և այս օգին... Իր օգնու-
թեան կանչեց չորս մեծ ոգիները որոնք
ազգերը կ'ստեղծեն և կը վերստեղծեն:
Փոյթխութիւնը կը պործէր, մինչ ժառան-
գախանութիւնը հաստատ կը պահէր ինչ
որ ան դարպացուցած էր: Իր լեռնա-
յին ամրութիւններուն վրայ անցանքը
աշխարհը հեռու կը պահէր, զստորունը
լաւագոյն մարդերը լաւագոյն նպա-
տակներու համար կ'ընտրէր, մէկ կողմ
դնելով տկարն ու գերին, մարդուն
տալով մարդու գործ: Եւ մարդու գոր-
ծը միշտ տունն էր, ան կ'զբաղէր քա-
ղաքներ շինելով, սփռութիւններ և
օրէնքներ հաստատելով, անտառներ
նուաճելով, ճահիճներ չորցնելով, նոր
սերունքներ պատրաստելով: Այսպէս
մարդիկ իրենց կաղապարէն զաւակներ
ունեցան, և հուժկու և քաջ մարդեր
միշտ իշխող եղան: Ազատութեան ու
գին իմաստուն տէր մ'է, որ իմաստուն
կերպով հոգ կը տանի իր վարչութեան
ենթակայ ամէն բանի:

Այսպէս ասաջին օրերը, քրք Հոռով-

մայեցիք մարդ էին, և երբ Հոռով-
մարդ էր, առանց փառքի, առանց հա-
րստութեան, առանց դադութներու և
առանց գերիներու, ասոնք Հոռովմէս-
կան մեծութեան օրերն էին:

Ապա Ազատութեան Ոգին կամաց
կամաց տեղի տուաւ Տիրապետութեան
Ոգիին: Մարդիկ ոյժի գիտակից ըլլա-
լով զայն փորձեցին գործածել ոչ թէ ի-
րենք իրենցովքայ, այլ արիւնջի մը վրայ:
Կամաց կամաց տփկայ նշանակեց իրա-
րու միացում, յարձակում, ճնշում, ա-
ւարում, մաքառում, փառք և այն բո-
լոր բաները որոնք պատերազմի շքեղու-
թեան և յարակից պարագաներուն
կ'ընկերանան: Մարդերու անհատա-
կանութիւնը սակաւութիւ անձերու մեծ-
նալուն մէջ կորսուեցաւ: Փառասիրու-
թիւնը կուլ տուաւ անկախութիւնը, հայ-
րենասիրութիւնը նոր իմաստ մ'առաւ:
Անիկա օճախէն և տունէն բանակի փո-
խադրուեցաւ:

Մեզ չի հետաքրքրեր թէ Հոռովմի յե-
տագայ պատմութեան մանրամասնու-
թիւնները ինչ էին: Հիմա մենք ազ-
գակ մը միայն նկատի պիտի առնենք,
Գիտութեան մէջ այս ազգակը ծանօթ է
«ընտրութեան շրջումը» քացատրու-
թեամբ: «Ձեր զաւակներուն լաւագոյն-
ընտրութեան շրջումը» Այսպէս կ'ըսէր Հոռով-
մէսկան մարտակոչը: Տիրապետու-
թեան ոգին այս բաները տառաջիօրէն
ընդունեց, և լաւագոյնը զրկուեցաւ:
Հոռովմէսկան յաղթութեանց ատեն վի-
րը, (առնական) քրքիւն մարդը, կը ու-
ռաւորու և օտարները նուաճելու գնաց,
իսկ իրեն, սփռական մարդը, դաշտն
ու գործատունը մնաց և նոր սերունդ-
ները արտագրեց: Այսպէս «վիրը տեղի
տուաւ հոռովմէս»: Իրական մարդերու
զաւակները տեղի տուին խոհանոցի
գործատրի պատկերներուն, արտոյի ծա-
ռանդութեան, գերիներութեան, և մարդկային
գիշտութիւն, որոնց երբեք պէտք չունի մեծ

յաղթական բանակը:

Հոռվմի անկումին պատճառը պերճասիրութիւնը, հեշտութիւնը, ապականութիւնը, ներոյրի և Գալիգուալի չարութիւնը, Կոնսդանդինի անարժէք դաւաններուն տիրութիւնը չէին: Անիկայ Փիլիպպէի մէջ որոշուեցաւ, երբ տիրապետութեան ոգին ազատութեան հոգիին յաղթեց: Անիկայ աւելի կանուխէն որոշուեցաւ, երբ եռապետները և հրապատուանիքը երեսն եկան և ինկաւ պարզ, չարքաշ, լինքնաբաւ ցեղը՝ որ չէր կրնար կամայական իշխանի մը հանդուրժել:...

«Մանկամտութիւն է խորհրթիքի թագաւորութիւնները թագաւորներու կողմէ կը շինուին», կ'ըսէ Չարլս Ֆէրկուսոն: Թագաւորը բան մը չէր կրնար ընել եթէ ամբողջ իր գլխաւորը դիւ չէր նետեր՝ թագաւորին ձեռք անցած պահուն: Ամբողջ թագաւորին կը յօժարի, անօր մէջ ամբողջային բան մը գրտնաւած ըլլալուն համար: Ամբողջ կը սիրէ փառքը և մրցանակները, թողաւորն ալ կը սիրէ: Եթէ ան զեղեցկութիւն և արդարութիւն սիրէր, ... երբեք չպիտի կրնար յարեւան մը կատարել կամ հարստութիւն մը հաստատել: Երբ խաւովանը պատրաստ ըլլայ գեղեցկութիւն և արդարութիւն պահանջելու, այն տանն այն ժողովրդապետութիւն կը դառնայ և թագաւորները կը լքէ:...

Այսպէս «Վիճիկ տեղի առաւ ՀԱՅԴԱՅԻ», իրական մարդիկը՝ սովորական մարդ արարածներու: ... Եւ այսպէս ամբողջ լեցուց Հոռվմի: Չարմանալի չէ որ «Կոնսդանդինի ճկայթ մատը Օգոստոսի մէջքէն աւելի հաստ էր»: Չարմանալի չէ որ «Եթէ Տիբերիոս իր հպատակները խաբարանով պատժեց, Վաղենտինոս գանոնք կարիճնելով պատժեց:»

«Կառավարութիւնը աստուածութեան ձեւերը առնելով անոր վերաբեր-

եալ բոլոր բաներն ալ ստանձնեց: Պաշտօնեաները շատցան: Հպատակները իրենց իրաւունքները կորսնցուցին: Անարգ վախը, վատագիւթիւնը, ժողովաբար անդամաւորեց, եւ իշխողները գինեւոյն լրբութեամբ և անպիտանութեամբ: «Ամենայնուր կառավարութիւնը այն է որ իբր Աստուածային ամենէն աւելի կը պաշտուի»: «Կայսրը ջախջախիչ ոյժ մ'ունէր բանակի մէջ, որուն վրայ քաղաքացիք ազդեցութիւն չ'ունէին, և որ բացարձակապէս խուլ էր բանականութեան կամ պերճախօսութեան, որ զուրկ էր հայրենասիրութենէ քանզի հայրենիք չ'ունէր, որ զուրկ էր մարդկային զգացումներէ քանզի ընտանեկան կապեր չ'ունէր:» Հոռվմէական գրականութեան մէջ ծայրէծայր կը տեսնուի պարկեշտ արհեստներու դէմ աւազակի մը և բարբարոսի մը արհամարհանքը: «Հոռվմէական քաղաքակրթութիւնը՝ ստեղծագործող տեսակէն չէր, քանզի այն գինեւորական էր, աշխեքն կործանիչ:» Այս բոլորին վախճանը լինչ եղաւ: Ազգը՝ իրական մարդեր ա'լ չ'արտադրեց: Հոռվմէական զաշտերը մշակելու համար «ամբողջ ցեղեր փոխ առնուեցան»: Արաւես աչքով և հուժկու բազուկով մարդը տեղի տուաւ, խոհանոցի գործաւորին, գելիին, ընկեցիկին, այն մարդուն՝ որուն բախտը չի փոխուիր քանզի անոր կը պակսի զայն փոխելու ոյժը: «Գերիները յանցանքներ ունին, բայց միայն ազատութեամբ իրաւունք ունին»: Վերջապէս Հոռվմէական աշխարհը բարբարոսին տեղի տուաւ, քանզի տկարացած էր: «Բարբարոսները հաստատուեցան և բնակեցան Հոռվմէական աշխարհի մէջ քան թէ զայն նուաճեցին:» և այս շարժումը պատմութեան մէջ արձանագրուած է իբր Հոռվմի անկումը:

«Իւրաքանչիւր 100 զօրաւոր մարդե-

րէն 80 հազարը սպաննուեցան: Իւրաքանչիւր 100 հազար տկարներէն 90—95 հազարը ապրելու ազատութիւնը ունեցան:»

Անհասկնալի է որ Հռովմայեցւոց զանգուածները չափազանցօրէն զարգացած, նրբացած ըլլալէ կը վնասուէին:» Հարուստ Հռովմայեցիներու մեղսապարտ պերճասիրութիւնը դատապարտելու ատեն, կը մոռնանք որ ժե. և ժԶ. դարերու մեծ վաճառականները այս մասին հազիւ ետ կը մնային Լուկուլլոսէ և Ապիկիոսէ, բայց իրենց շռայլութիւնն ու պերճասիրութիւնը երբեք չ'արգելեցին իրենց պատկանած ազգերուն յառաջդիմութիւնը: Հռովմի մէջ պերճանքով ապրող մարդերը շատ աւելի ցանցառօրէն ցրուած էին քան ու է արդի Եւրոպական երկիր մը:

«Պէտք եղածէն աւելի երկար ատեն պատմաբանները հարուստն ու աշնուակունը նկատած են իբր աշխարհի բախտը որոշողները: Հռովմէական կայսրութեան կէսէն աւելին կը կազմէին կոշտ բարբարոսները, որոնք չփոմ ունեցած չէին Հիլէնական կամ Հռովմէական մշակոյթին հետ:»

... նման պատճառները նման արգիւնքներ կուտան ... Մարդկային պատմութեան մէջ ուր որ տկարը և վատը կը վերապրին, հոն «մարդկային հոռնձքը գէշ կ'ըլլայ:»

Կը պատմուի որ Կիլոս անգամ մը ձէյմա Բուռլը Լօվըլի հարցուցած է թէ «Հանրապետութիւնը որչափ պիտի շարունակէ իր գոյութիւնը» «Որքան ատեն որ անոր հիմնադիրներուն գաղափարները կ'իշխեն», եղած է պատասխանը: Բայց դարձեալ կը հարցունենք թէ «որքան ատեն անոր հիմնադիրներուն գաղափարները պիտի իշխեն» Ծիշդ այնքան ատեն որքան որ հիմնադիրներու արիւնը անոր ժո-

ղովուրդին արիւնին մէջ իշխող կ'ըլլայ: ... Ազատ արիւնէ սերածներն են որ ազատ ազգ մը կ'ստեղծեն: ...

ԾՆՈՒՆԴԻ ՊԱՏԳԱՄ ՄԸ

Ծնունդը այն տարի եղաւ այնպիսի ատեն մը երբ աշխարհիս բոլոր ազգերը, առանց մեծի և փոքրի խտրութեան, վախի և կասկածի ովկիանոսի մը մէջ կը տատանին խաբխուլ նաւակներու պէս՝ յանձուած ժամանակի անգութ փոթորիկներուն:

Որդ մը կը կրծէ աշխարհիս արմատը — նոր համաշխարհային պատերազմի մը հսկայ սարսափն է այն:

Մինչև որ մանուկներու հողին չունենանք Ծնունդի իսկական նշանակութիւնը չենք կրնար ըմբռնել:

Եթէ բոլոր մարդիկ մանուկի մը չափ անկեղծ ըլլային ու խոստովանէին թէ՛ մի'այն մարդկային միտքը և իմաստութիւնը, զիրենք ի վիճակի չեն ըրած զիմագրաւելու ներկայ աշխարհի բոլոր տնտեսական տաղնապները թշուառութիւններն ու նման խռովիչ հարցերը, և եթէ մարդիկ պահ մը կանգ առնէին ու ունկնդրէին Բեթլէհէմի հրեշտակաց խումբին, այն ատեն բարդ կարծուած համաշխարհային խռովիչ հարցերէն շատերը իրենց լուծումը չատենց գաած պիտի ըլլային:

Մանուկին օրորոցին քով ազգի կամ ցեղի խտրութիւնը չկայ — բոլոր մարդիկ մէկ ընտանիքի զաւակներն են:

Մանուկներու հաւատքով պէտք է տօնել Ծնունդը և լսել հրեշտակաց մեղեդին, դարերու այդ անուշ յանկերգը, «Երկրի վրայ խաղաղութիւն, մարդոց մէջ հաճութիւն»:

Խաղաղութիւն և հաճութիւն: Ահա ներկայ աշխարհիս պէտքը:

Առաջին Ծնունդի այդ պատգամը միայն կրնայ տխուր լինել և ցաւի արցունքները սրբել մեր աչքերէն:

ՏԱՐԵԴԱՐՁԻ ՄԸ ԱՌԹԻԻ

Պէյրուքի Ա. Հայ Աւետ. եկեղեցիին Ձանից Ընկերութեան վեցերորդ արեւոյթի վեր. Ս.Ս. Մանուկեանի Հայեպէն դրական գրութիւնն և հետեւեալը. (Ծ. Խմբ.)

Ինծի հաճելի թուեցաւ սա լուրը թէ Դեկ. 20, 1931 ը պիտի տօնէք իբր Ձանից Ընկերութեան վեցերորդ տարեգարծի օրը: Թէպէտ ամէն մարդ իր ծնունդի տարեգարծը կ'առնենայ, բայց աւելն մարդ զայն չի տօներ. եթէ քօնէ իսկ արիւններ անոր կարեւորութիւն չեն տար: Մարդու մը անձնական արժանիքին և ծառայութեան չափին համեմատ անոր ծնունդի տարեգարծը տօնելու կը մասնակցին:

Այնպէս կը թուի թէ Ձանից Ընկերութիւնը Պէյրութի համար կարեւոր ծառայութիւններ կը մատուցանէ, քանզի եթէ չէր մատուցաներ, դուք չպիտի համարձակէիք այսպէս հրապարակաւ տօնել անոր տարեգարծը: Ահա ասոր համար ձեզ կը շնորհաւորեմ:

Այս տարեգարծին անձնապէս ինծի ունեցած յարաբերութեան գալով ըսեմ որ ինծի աւելորդ յարգանք մ'ըրած կ'ըլլաք երբ զիս «Ընկերութեան Հիմնադիրը և առաջին նախագահը» կոչելով ինծի գրութիւն մը կը պահանջէք: Քանզի աւելի չիտակ չարժած պիտի ըլլա՞նք եթէ անոր հիմնադիրները նոյն իսկ Պէյրութի մէջ, ժամօքնակի՞ն եկեղեցիի հոգաբարձութեան մէջ փնտռէ՞նք: Բնականաբար ես բան մը չպիտի կրնայի ընել եթէ այդ ազնիւ և սրտոտ անձերը չըլլային: Ինչ որ է, արդիւնքին մէջ ես ալ ուրախակից կ'ըլլամ առնց և ձեզի մեծ բարեկամ եղող ներկայ հովիւին և ժողովուրդին, ձեզ կը շնորհաւորեմ և ձեզի յառաջդիմութիւն կը մաղթեմ:

Այս արթիւ ձեռ. օգնագրութիւնը կը

հրաւիրեմ հետեւեալ երեք պարզ կէտերուն:

Ս.ՌԱՋԻՆ՝ ՁԱՆԻՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
ՀՈԳԵԻՈՐ ԱՐԹՆՈՒԹԵԱՆ ՄԸ ԾՆՈՒՆԴՆԷ:

Այս ընկերութիւնը կարգ մը խելացի մարդոց իմացական օյժին և խորհրդակցութեան արդիւնքը չէ. այլ անիկայ ծնունդն է այն հոգեւոր արթնութեան, որ յառաջ եկած է Վեր. Գլարքի եկեղեցիին մէջ Ս. Հոգիի ներգործութենէ և եկեղեցիին Անոր գործունէութեան առիթ տալէն: Ինչպէս որ մանուկը իր մօրը ծնունդն է, նոյնպէս ալ իր մօրը կաթով կը սնանի: Հետեւաբար Ձանից ընկերութեան յարատեւութիւնն ու զարգացումը հոգեւոր արթնութեան հետ կենսական յարաբերութեան մէջ է: Երբ արթնութիւնը տկարանայ Ձանից Ընկերութեան օյժն ալ կը տկարանայ, և ինք անշարժ կը մնայ: Ապակամայ համայն կ'ստիպուի կարգ մը զրօսանքներու և ցոյցերու դիմել: Բուն նպասակը կ'անտեսուի, և միջոցները նպատակի տեղը կը գրաւեն: Բազմութիւնը շատնայ իսկ բուժուելու հրաշքները կը պակսին:

Բեթհեզալ աւազանին մասին կը կարգանք թէ «Բեթզալ մը ժամանակ ժամանակ աւազանը կ'իջնէր ու ջուրեր կը խտնէր, և ով որ անհեղինակաբար ջուր կը մտնէր կը թշկուէր ի՞նչ հիշանդարտաբար աշունակաբար»:

Այդ աւազանը եկեղեցիի կամ ընկերութեան հաւաքոյթներն են, որոնք ժամանակ ժամանակ երեսն եկող արթնութիւններով կը յուզուին: Միայն սա տարբերութեամբ որ ոչ թէ անհատ մը, այլ ով որ անոր մէջ մտնէ իր բոլոր մեղքերէն մաքրուած ըլլալով դուրս կ'իլլէ: Երիտասարդներու՝ բազմութեամբ ժողովներու յաճախելը, որչա-

դրութեամբ մտիկ ընելը կը ցուցնեն թէ անոնք մեծ բաներ կ'ազնկալեն մեզմէ, և թէ մեր պարտականութիւնները ծանր բաներ են: Կարցը սա է. «Ձուրը արդեօք կը խառնուի», շատեր կը բժշկուին:

Ինչ հիանալի տեսարան մ'է «չորացած ոսկորներու» իրարու քով գալը, ջիղերով, միտով և մարմով ծածկուելը: Այսուհանդերձ՝ անոնց այդ վիճակին մէջ մնալը անոնց հոտելուն և իրենց նախկին վիճակին դառնալուն կրնայ պատճառ ըլլալ: Բայց հոգիի գալով անոնց ներշնչելէն ետքն է որ անոնք կենդանացան և բանակ կազմեցին: Մեր վիճակը՝ ներկայ գործունէութեամբ մեր չգտնաւորը և «հոգիին ներշնչելուն» մեր կարօտով սպասելը կը ցուցնէ՝ արդեօք: Այս ջերմ բաղձանքը զո՞վ որ զըրաւ է, եւ զայն առանձնարանին մէջ Աստուծոյ հետ տեսութեան, յամառ և յարատե աղօթքի կը մղէ, ահա աւազանի ջուրը խառնող հրեշտակը այն է: Հրեշտակին տեսնուելը կամ թիւով շատ ըլլալը անհրաժեշտ չէ: Անտեսանելի մէ՛կ հրեշտակ կրնայ աւազանը խառնել:

Չէ՞ որ մեկ օրուան արթնութիւնը մէկ տարուան պաշտամունքներէն աւելի արդիւնք կրնայ տալ: Ձմեռ ատեն փոքր տարածութեամբ ապակեպատ տեղ մը տեւական արուեստակոն տաքութեամբ և մեծ հոգածութեամբ կարելի է կարգ մը բոյսեր մեծցնել, բայց քարնան տանն է որ բոլոր բնութիւնը կանանչութիւն կը հագնի, ամէն կողմ բոյսու գեղ կը սփռէ: Ջանից ընկերութեան մեծագոյն բաղձանքը ահա այս գարունը, այս արթնութիւնը պէտք է ըլլայ:

Վիզդորիո թագուհին իր մանկութեան միջոցին անտեղեակ պահուած է ապագային իր թագուհի ըլլալուն մասին, որպէսզի ժամանակէն առաջ իր պարտականութեան ծանրութիւնը չի կրէ: Բայց օր մը երբ կերպով մը կը հասկնայ այս պարագան՝ կ'սկսի լալ:

Իր լալուն պատճառը հարցնողներուն կը պատասխանէ որ ի՞նք այս հէտին աւելի կանուխէն տեղեակ ըլլար, ոչ թէ մանուկի մը պէս այլ ապագայ թագուհիի մը պէս աւելի՛ լուրջ պիտի ապրէր: Ջանից ընկերութիւնը որքա՛ն աւելի լուրջ կեցուածք մը պէտք է ունենայ, քանզի երկրային կազմակերպութեան մէջ եզական հաստատութեան մը ժառանգորդը պիտի ըլլայ: Երկինքի յոյսին պատասխանը և աշխարհի ցաւին դարմանը ինքը պիտի տայ: Ուրիմն՝ այս պարտականութեան առջեւ որչափ ալ դժուար և Աստուծոյ օգնութեան որչափ ալ դիմէ քիչ է:

ՋԱՆԻՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ Մ'Է:

Երիտասարդը եկեղեցիին մէջ մեծ գիրք ունի: Եկեղեցին այն միակ կազմակերպութիւնն է որ երիտասարդին տմէնէն աւելի կարեւորութիւն կ'ընծայէ, տմէնէն աւելի կը վստահի անոր, ամէնէն ծանր պարտականութիւններ կը դնէ անոնց ուսերուն վրայ, ամէնէն մեծ յոյսերը կը տածէ անոր մասին: Եկեղեցին առաւելապէս երէկ՝ ծերերուն, այսօր չափաւասներուն, վաղը՝ երիտասարդներուն և միւս օրը մանուկներուն գործունէութեան կեդրոնն է: Ինչ զարմանալի է. դիւրաւուր, բայց զժուարհակնալի, այսու հանդերձ անուրանալի ճշմարտութիւն մ'է որ եկեղեցին «Աստուծոյ արիւնովը ծախու առնուած» «Անոր հոգիով արքայործուած» է, և սկիզբէն իվեր իր յոյսը և աշխատանքին արդիւնքն է, և այսպէս ըլլալով հանդերձ անիկա երիտասարդին կը ներկայացուի անոր գործունէութեան վայր ըլլալու համար:

Ուրիմն անհրաժեշտ է որ երիտասարդը այս պարտականութեան առջեւ լուրջ կեցուածք մը առնէ, և նոյն իսկ Մովսէսին ման գիտակցի որ իր կոխած տեղը սուրբ է:

Հոս չեմ ուզեր խօսիլ Ջանից Ընկե-

բութեան հանդէպ հովիւին և եկեղեցիին բռնելիք դիրքին մասին. տախտակը թողու՛մ հեղինակաւոր անձերու: Բայց ես կ'ուզեմ հոս շեշտել թէ Զանից ընկերութիւնը պէտք է անոնց հանդէպ յարգանքի և գործակցութեան ոգի սընուցանէ: Երիտասարդութեան յայտնի փորձութիւններէն մէկն ալ անկախ գործելու միտումն է: Չափահաս և փորձառու մարդերէ օգտուել յաճախ շատ դժուար ըլլալ կը թուի: Երիտասարդի մը իմաստութիւնը կը յայտնուի անցեալէն քաղած իր դասովը, ներկայիս ու-

նեցած խորհրդածութեանքը և ապագայ գործունեութեանքը: Երեւակ է որ երիտասարդի մը համար անպէտ և երբեմն ալ յագնեցուցիչ կ'ըլլայ չափահասին հարցնել անոր մասին որ արդէն արդար և օգտակար կը թուի: Բայց շատ անգամ տարիներու արգիւնքը եղող ծանօթութիւնները վարդի կը նմանին, իսկ ծերութեան արտադրած այլևայլ տկարութիւնները իբրեւ փուշ զայն կը պատեն: Եւ սակայն երիտասարդի մը համար ներհիւ չէ փաշի պատճառաւ վարդը չվայելել:

ՍՈՒՐԲ ԳԻՐԲԸ

Ար. Գիրքի գերազասութիւնը ուրիշ բոլոր սրբազան մատեաններու վրայ կը կայանայ սա ամենամեծ իրողութեան մէջ՝ թէ անիկա իսկապէս կեանքի Գիրք մըն է: Իր տառերուն ետեւը մարդկային իրական փորձաստութեանց հիմնաքարը կայ: Իր էջերը արտայայտեցողութեան են մարդկային դէմքերու, իրենց յոյսովն ու վախով, աւրախութիւնովն ու տխրութիւնով, ողբերգութիւնով և յաղթանակով: Իր զիւցադներգութիւններն ու ողբերգութիւնները, գեղօններն ու բանաստեղծութիւնները, սաղմոսներն ու աղօթքները, բառերն ալ մարդկային սրտին ամենախորունկ զգացումներուն արձագանքը կը հանդիսանան: Անիկա իրական մարդոց ու կիներու կեանքին թանգարանն է, որոնց մէջ և միջոցաւ Աստուած կը խօսի հոգւոյն: Բոլոր Գիրքը նախ ապրուեցաւ և վերջը գրի առնուեցաւ, և իր հրապոյրն ու զօրութիւնը կը կայանայ իր կենսական արժէքներուն մէջ: Եւ որովհետեւ միայն կեանքը կարող է բռնկեցնելու ուրիշ կեանք մը, քանի որ ճշմարտութիւնը անշուք է մինչև որ ան կեանքի մը մէջ

չմարմնանայ, քանի որ անձնականութիւնը հզօրագոյն ազդակն է աշխարհի մէջ, Ար. Գիրքը իբր կեանքի Գիրքը, հզօր ոյժ մը եղած է զարեթու մէջէն մարդկային կեանքին՝ զարգացման համար: Անիկա Ազատութեան ջահը վառեց և Ուրիշիք ու Սալօնարօյա, Լատեր և Նաքս, Մաքրակրօններն ու Հիւլընօթները դէպի յառաջ կրեցին զայն: Անիկա մշտական ներշնչարանը եղած է ամէն բանի որ մաքուր, վեհ ու զեղեցիկ է կեանքին մէջ: Մովսէսի եւ մարդաբաններու պատգամաբանէն Փիթ և Պըք ու Ուէպթըր սրտի ամենախորունկ զգացումներուն թարգմանը ըլլալու արուեստը սորվեցան: Իր անփոփոխելի Արդարութեան և իմաստուն Օրէնքին մէջ կլատըսթըն և Ուալթիկթընի նման մարդեր միակ մնայուն հիմնաքարը գտան ճշմարիտ կառավարութեան մը համար: Իր սրտագրաւ մեղեդիներէն, երկերէն, սիրոյ ու խաղաղութեան ներգաշնաւորութիւն արձագանգութիւններէն բղխեցաւ ներշնչումը՝ Պախի ու Պէթովէնի, Հանսրի ու Հէյտընի, Կուեօտի և Մէնտըլսօնի երկնային երաժշտութեան: Իր սաղմոս-

ներն աւ հոգեւոր երգերը Ուէսլիի, Ուաթսի, Տայիսի և Պէրնպիի անմահ երգերուն նիւթն աւ շարժառիթը եղած են: Իր կենդանի պատկերներն և այլազան տեսարանները Ռափայէլ ու Միշէլ Անճէլոյի գլուխ գործոցն երուն ներշնչումն եղան: Իր խորաւել փիլիսոփայութեան մէջ խորասուզուած են աշխարհի ամենամեծ միտքերը, Օգոստինոսէն սկսեալ մինչեւ Քանթ ու Հէկէլ: Եսայի ու Երեմիայի մը կեանքն ու խօսքերը վերջին օրերու մարգարէներուն ծնունդ տուած են եւ ֆիլիփս Պրուքս, Պիչըր, Սփըրճըն ու Մուտի հզօր եռանդով եւ մարգարէական զօրութեամբ խօսած են: Խաչի առաքեալներու հոգին տակաւին կ'ապրի կենսագրութեան մէջ քրիստոնէական դարերու սուրբերուն, մարտիրոսներուն և հերոսներուն՝ որոնք իրենց արինով մկրտած են այդ դարերը: Եւ պատմութեան Սըր կէլէհէտներու մեծ խումբը, Պոպոսէն մինչեւ Լինքըն սուպրետական անվերհր հօգիւ մը դէպի յառաջ արշաւած են պաշտպան կանգնելու տկարներուն ու ճնշեալներուն Սր. Գիրքի մարտակոչ հրաւերին ի լուր:

Քանի որ վերջին փաստը՝ թէ Սր.

Գիրքը մարդկութեան գերագոյն գիրքն է, կը կայանայ ճշմարտութիւնն ու զԱստուած յայտնելուն մէջ, ոչ թէ տառերու՝ այլ մարդոց, ոչ թէ բնաբաններու՝ այլ անձնականութեանց մէջ, պէտք է որ Սր. Գիրքի ճշմարտութեամբ արթնութեան զխաւոր նպատակըն ըլլայ՝ հասկնալ ոչ թէ իր տառերը այլ կեանքերը: Սր. Գիրքի ոճն աւելցուն վերարտադրելու կարողութիւնը զնահատելի է, բայց երբեք բազդատութեան դրուելու չէ հոգին՝ իր մեծ և կրակ ու բոց անձնաւորութեանց հետ հաղորդակցութեան զնեղու շնորհքին հետ: Եսայիի հետ Տաճարը մտնելու ճէրմջ տեսիլքը տեսնել, փառայիդ երուսաղէմի աւերակներուն վրայ Երեմիայի ողբերուն վիշտը բաժնել, Պոպոսի հետ Հոռովի բանտը մտնել և իր հաւատքին վերջին հրճուալից խօսքերը լսել, Քրիստոսի հետ Բեթլեհէմէն մինչեւ Գողգոթա քալել — այս ներշնչող փորձառութիւնները անհունօրէն աւելի զօրավիգ են հոգիներուն քան թէ Սր. Գիրքին տառին ու բնաբաններուն հետ ամենակատարեալ ծանօթութիւնը:

Հ. Ք. ՊՈԻԹՆԻ The Background of the Bible Գիրքէն քաղուած

ԱՌԱՒԵԼ ՄԵԾ ԳՈՐԾԵՐ

Տ. Փոլինկի ճառը Զանից համաժողովին մէջ:

Ծ. Խմբ.

Սան Ֆրանսիսքոյի համաժողովը Երեւանի արթիւ ընտրեց նշանաբան մը որն է «Առաւել մեծ Գործեր»: Անցեալին՝ այս ընկերութիւնը կատարած է մեծ գործեր պատրաստելով մեծ առաջնորդներ, զրկելով միսիոնարներ, օգնելով բանտարկեալներուն, բարոսներուն և անկեալներուն, վերջապէս ծառայութեան մեծ դասը սորվեցնելով երիտասարդ և երիտասարդուհիներուն, բայց և

այնպէս ապագան աւելի մեծ պատկերութիւններ կը խօստանայ և առաւել մեծ գործերու առպարէզը կը բանայ:

Ուրեմն որոշ քայլեր առնելու համար կառավարիկներ հետեւեալները. —

(1). Խաչակրութիւն Քրիստոսի հետ մէկ միլիոն ուրիշ երիտասարդներ Քրիստոսի բերելու յառաջիկայ կրկու տարւան մէջ: Այս ուղղութեամբ կը թեւադրենք որ ամէն մէկ ընկերութիւն աշխատի իր անդամակցութիւնը աւելցնել յիսուն առ հարիւր: Եւ որոշ ծրագիր-

ներ չինէ աւետարանչական գործը յառաջ տանելու համար իր անդամներուն մէջ:

Ձանիցը հոգեւոր արթնութեան մէջ ծնած է, ուստի այս տեսակ միջավայրի մը մէջ միայն կրնայ զարգանալ ու բարգաւաճիլ: Ընկերութեան պարտականութիւնն է առաջնորդել իր անդամները որպէսզի անոնք փնտռեն փրկութիւն, ընդունին Քրիստոսը իբր իրենց անձնական փրկիչը, ունենան փոխուած ու նուիրուած կեանքեր, և ուխտեն հետեւիլ Փառլիւացիին: Քրիստոնեան իր գերազոյն երջանկութիւնը կ'ունենայ սա զրաակցութեան մէջ թէ ինք միջոց եղած է ուրիշ մէկ մըն ալ առաջնորդելու Անոր, որ է Կեանք անսահման, և Աէր անհուն:

(2) Խաչակրութիւն Քրիստոսի հետ «Քրիստոսի և եկեղեցւոյ համար»: «Քրիստոսի և եկեղեցւոյ համար» «առաւել մեծ գործեր»: Ահա կատարեալ բազմաթիւ մը բոլոր այն սկզբունքներուն որոնք կը ներկայացնեն ճշմարիտ մեծութիւն և զօրութիւն ապագայի համար: Այսօր ուխտենք հաւատարիմ մընալ մեր պատկանած եկեղեցիին և յարանուանութեան՝ ծառայելու և օգնելու հոգիով տոգորուած անոր ամէն մի գործունէութեան մէջ: Ձանիցը պէտք է գործաւորներ պատրաստէ եկեղեցւոյ համար: Դարձեալ անոր պարտականութիւնն է քոյր յարանուանութիւններու և քոյր եկեղեցիներու միջև տաք յարաբերութիւն մը ստեղծել: Որքան ցաւալի է տեսնել տարբեր յարանուանութիւններէ եկեղեցիներ որոնք փոխանակ ձեռք ձեռքի տուած թշնամիին պէմ կռուիք պարզելու և Աստուծոյ Թագաւորութիւնը յառաջ տանելու, իրարու գործունէութիւնները կը չէզոքացնեն: Անոնք իրարու յանցանքներուն խաչաբացոյցով կը նային, մոռնալով թէ նոյն Քրիստոսի ծառայներն են բոլորն ալ:

Մինչեւ որ եկեղեցիները միաբանութեամբ չ'աշխատին, մանաւանդ բողոքական եկեղեցիները՝ որոնց բաժանումները չափը չենցած են, Քրիստոսի գործը պէտք եղածին չափ յառաջ չի կրնար երթալ: Այս միաբանութիւնը յառաջ բերելու համար Ձանիցը լաւ միջոց մը կը բնայ ըլլալ. ինչու որ ան գործնականապէս ըրած է այս բանը տարբեր ազգէ, լեզուէ, և յարանուանութիւնէ անհատներ նոյն ընկերութեան անդամներ ընելով:

(3) Խաչակրութիւն Քրիստոսի հետ լաւ քաղաքացիութեան համար: Մենք կը հաւատանք որ հայրենասիրութիւնը տունէն կ'սկսի, եւ թէ մենք ճշմարիտ քրիստոնեաներ չենք կրնար ըլլալ թէ որ չ'աշխատինք արժանի անդամներ ըլլալու մեր պատկանած համայնքին եւ պետութեան:

Ուստի իբր լաւ քաղաքացիներ կառավարկենք ազերոագիր մը ներկայացնել Քոնկրէտի՝ խնդրելով որ կառավարութիւնը արգիլէ ներմուծումը ազտոտ պատկերներու և զրականութեան այնպէս անյարմար շարժապատկերներու որոնք կը թունաւորեն երիտասարդ միտքերն ու հոգիները՝ առաջնորդելով զանոնք դէպի ցածը, զէպի կորուստը:

Ասկէ ճիշդ քսան տարի առաջ Աթլանթիք քաղաքի համաժողովին մէջ թիւադրուեցաւ նշանաբան մը. «Առանց գինեւորելի Ամերիկայ մը 1920»-ին, Այս նշանաբանը երազ մը չէ այլիւս այլ իրականութիւն մը: Սակայն հիմա Ամերիկան աւելի մեծ տազնապի մը մէջ կը գտնուի: Դինեւորները պիտի բացուին թէ ոչ. այս է հարցը որ ամբողջ Ամերիկան կ'զբաղեցնէ:

Այս գիշեր կ'որոշենք թէ մենք՝ Ձանից ընկերութեան անդամները՝ քուէ պիտի չտանք այն անձերուն որոնք հակառակ են գինարգելութեան, և Աստուծոյ օգնութեամբ պիտի չթոյլադրենք

որ գինեւորները դարձեալ բացուին այս երկրին մէջ:

(4) Խաչակրութիւն Քրիստոսի հետ աշխարհիս խաղաղութեան համար: Զանիցի շարժումը յանդուգն փորձ մըն է ամբողջ մարդկութեան մէջ հզօրացում թիւն յառաջ բերելու համար: Հայրենասիրութիւնը տան մէջ կ'սկսի սակայն հոն չի վերջանար:

Ճշմարիտ հայրենասիրութիւնն ու ազգասիրութիւնը աւելի ի յայտ կու գան երբ մէկը աշխատի որ իր երկիրը ռուսի իր կիրքներու հետ խաղաղ ապրի: Աշխարհ իր պաւակներուն խոստացաւ թէ վերջին Մեծ Պատերազմը՝ պատերազմ մ'էր պատերազմը վերջացնելու համար. սակայն պատերազմները պատերազմով չեն վերջանար: Զանիցը պիտի նստի ռուսի յառաջիկայ 50 տարուան մէջ իրականացնելու համար Բեթղեհէմի աւղօթքը՝ «Երկրի վրայ խաղաղութիւն եւ մարդոց մէջ հաճութիւն»:

Ասոնք են ուրեմն մեր նպատակները: (1) Խաչակրութիւն Քրիստոսի հետ մէկ միլիոն ուրիշ երիտասարդներ

չահելու Քրիստոսի համար յառաջիկայ երկու տարուան միջոցին: (2) Խաչակրութիւն Քրիստոսի հետ Քրիստոսի եւ եկեղեցւոյ համար: (3) Խաչակրութիւն Քրիստոսի հետ լաւ քաղաքացիութեան համար: (4) Խաչակրութիւն Քրիստոսի հետ «Աշխարհի խաղաղութեան համար»:

Վերջապէս այսօր մենք դարձեալ նստիւնք եւնք Անոր: Առաջ ես ունենալու եմ Զինքը:

Դարեր առաջ օրինական մը եկաւ Գալիլիացիին և ըսաւ. «Վարդապետ, ուր որ երթաս պիտի հետեւիմ քեզի»: Զանից ընկերներ մենք պատրաստ ենք նոյնը ըսելու. «Ապաւինելով Յիսուս Քրիստոսի փրկարար ոյժին» պատրաստ ենք, պատրաստ ենք զայն կրկնելու: Եթէ այո, մենք ալ կարող ենք «առաւել մեծ գործեր» ընելու: Իրեն չհետեւիլ կը նշանակէ մութին մէջ գայթակղիլ, կեանքի պայքարին մէջ յաղթուիլ: Սակայն Քրիստոսով ամէն մի նպատակակէտ որ մեր առջեւ դրած ենք, Քրիստոսով պիտի յաջողինք, Անով պիտի յաղթենք: Թրգ. ԵՍ. Տ. ՄԿՐՏԻՉԵԱՆ

ԵԹԷ ՔՐԻՍՏՈՍ ԵՎԱՆ ԶԸԼԼԱՐ

Ծնունդի առաւօտ մը քարոզիչ մը իր տերտղութեան սենեակին մէջ կարճ քունի մը մէջ ինկաւ և երազեց որ Յիսուս չէր եկած:

Իր երազին մէջ իր տան ամէն կողմէն ընայեցաւ բայց չգտաւ պզտիկ գուլպաներ՝ կախուած փութերիկին անկիւնը: Այդ օրը նա չլսեց Ծնունդի զանգակներուն հնչիւնը, վասնզի չկար Քրիստոս մը մխիթարող, ուրախացնող և փրկող: Դնաց իր գրագրարանը, սակայն Փրկչին անունը պարունակող ամէն մի գիրք անհետացած էր:

Մէկ ալ իր տան դուռը զարնուեցաւ և պզտիկ տղայ մը ներս մտնելով խնդ-

րեց իրմէ որ իր մահամերձ մօրը այցելութիւն մը ընէ: Քարոզիչը աճապարանք հետեւեցաւ տղուն և երբ նստաւ հիւանդին քով ըսաւ անոր. «Այս գրքին մէջ քեզ մխիթարող և քեզի յոյս ներշնչող մի քանի խօսքեր ունիմ»:

Բացաւ իր Ս. Գիրքը. սակայն ան կը վերջանար Մաղաքիայով: Զկար Աւետարանը, չկար յոյսի և փրկութեան ունեւ խոստում մը, ուստի յուսահատ ինքն ալ լացաւ հիւանդին հետ:

Երկու օր վերջը ան կեցաւ անոր դագաղին քով և կատարեց թաղման արարողութիւնը, սակայն չունէր պատգամ մը մխիթարութեան, չունէր խօսք

մը փառաւոր յարութեան և յաւիտեանական կեանքի մասին: Միայն ունէր խօսք մը. «հող էիր և հող պիտի դառնաս»: Քարոզիչը իրապէս համոզուեցաւ թէ Քրիստոս չէր եկած և իր ախուր հրազին մէջ լացաւ գառնօրէն:

Յանկարծ ան արթնցաւ ոստուժով մը և ուրախութեան ու փառաբանութեան աղաղակ մը փրթաւ իր շրթներէն որովհետեւ իր հեղեղեցիին երգչախումբն էր որ կ'երգէր սապէս.

Մի վախնար, մեղաց որդի, ա'լ կ'որէ քու լաց:

Մի վախնար, վշտաց որդի, տես երկինքը բաց.

Թող ա'լ քեզ սարսափ չ'ազդէ ցուրտ մահուան սառեկը.

Զի ծնաւ Յիսուս մեր Տէրն:

Ուրախ ըլլանք և երգենք Մնունցի առթիւ որովհետեւ «Քրիստոս եկած է,» և յիշենք հրեշտակին աւետար, «Ահա և ձեզի մեծ ուրախութեան աւետար կուտամ, որ բոլոր ժողովուրդին պիտի ըլլայ, վասնզի ձեզի այսօր Փրկիչ մը ծնաւ Դաւիթի քաղաքին մէջ, որ Օծեալ Տէր է:» Թարգ. Ե. ՏէՐ ՄԿՐՏԻՉԵԱՆ

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ ՆԵՂՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ ՀԱՄԱՐ

Բաւական չէ ուրախութեամբ սկսիլ հաւատքի ունէ ձեռնարկ մը: Պէտք է կտոր կտոր ընել ճամբորդութեան զամէն մի ծրարիլը՝ զոր երեւակայութիւնը գծած է, և ամէնէն պզտիկ մասնաւորութեան մէջ Անոր հետ քալել:

Բաներ չեն պատահիր քու ակնկալածիդ համեմատ:

Քու Առաջնորդդ բանուկ ճամբայ չ'ունի: Ան միշտ նայն ճամբայէն չի քալեր: Ան քեզ պիտ' առաջնորդէ անանկ ճամբայէ մը զոր զուէն երբեք չէիր հրաշեր թէ աչքերդ պիտի տեսնան:

Նա վախ չի ճանչնար. և կ'ակնկալէ որ զուէն ալ չվախնաս ունէ բանէ՝ մինչ նա քեզի հետ է:

Հաճոյք է Անոր համար գործել, անյոյս և կատաղի կացութեան մէջ, երբ կ'զգայ իր զաւկին փառող ձեռքը:

Աստուծոյ հետ ճշմարտապէս քալել աւելի պիտի արթնցնէ քու մէջդ հագեկան յարգանք, զարմանք և հիացում քան թէ հարիւր տարի ճամբորդութիւն ընել երկրագունդի տեսարանները դիտելու համար:

Քու գործդ է սորվիլ՝ խաղաղ ու ա-

պահով ըլլալ Աստուծոյ մէջ ամէն պարագայի տակ:

Քեզ ծանօթ ճամբաներէ իր նպատակին հասցնել քեզի համար քիչ օգտակար է: Ան կ'ընտրէ քեզի համար անծանօթ ուղիներ որ զուէն ստիպուիս յարաբերութեան մէջ մտնել իրեն հետ հազար ու մէկ անգամ—և այս յարաբերութիւնը ճամբան յաւիտեանս յիշատակիլ պիտի դարձնէ իրեն և քեզի համար:

Դժուարութիւնը՝ ստոյգ մթնոլորտն է հրաշքի—հրաշք առաջին քայլի մէջ: Եթէ մեծ հրաշք մը տեսնել կ'ուզես պայմանը դժուարութիւնն է, հապա՛ անկարելիութիւն:

Ինչ որ ալ ըլլան Անոր հարցերը կամ լռութիւնը, կրնանք բացարձակապէս վստահ ըլլալ թէ անվարան և աներկիւղ է մեր Փրկիչը: Նա գիտէ թէ ինչ կ'ընէ:

Աւելի՛ ճանչցիր զԱյն. և փորձէ Տանգէի սա մեծ խօսքը.— «Անոր կամքն և վեր խաղաղութիւնը»:

Փեհեթիկա

Ազատ Թարգմ.
Մ. Մ. ԱՅՃԵԱՆ

ԵՐԿՈՒՈՐԵԱԿՆԵՐ

Երկու տեսակ երկուորեակներ կան։ Աստնցմէ առաջինը՝ իրարմէ անջատ երկու հաւկիթներու զիպուածով նոյն պահուն արգասաւորումէն զոյացած զոյգերն են, որոնք զէմքով իրարու շատ չեն նմանիր, բնութեամբ և կարողութեամբ իրարմէ տարբեր կ'ըլլան, և որոնցմէ մէկը արու մէկը է՞ զ կրնայ ըլլալ։ այնպէս որ այս տեսակ երկուորեակներ տարբեր ժամանակներու մէջ ծնած երախաներէ խտրութիւն մը չունին, միայն թէ գիպուածով նոյն ժամանակի մէջ արգասաւորուած հետեւաւորար նոյն ժամանակի մէջ ծնած են։

Երկրորդ տեսակէ երկուորեակներ առկէ բոլորովին տարբեր եղանակով զոյացած զոյգեր են։ Ծանօթ իրողութիւն մ'է որ ամբողջ գործախանական աշխարհը բջիջներէ (cells) շինուած է։ Բջիջները կորիզ (nucleus) մը ունին։ Երբեմն երկու կորիզ կ'ունենան բացառաբար ալ երեք կորիզ կ'ունենան։ Հաւկիթները կամ ձուերը աշխարհիս ամենախոշոր բջիջներն ըլլալով՝ ասոնք ալ երբեմն մէկէ աւելի կորիզներ կ'ունենան։ Երկու զեղնուցով հաւկիթներու զոյութիւնը ամենուն ծանօթ է։ զեղնուցները հաւկիթ բրբիջներու կորիզներն են։ Հիմա խնդիրը հասկնալի է։ Երկու զեղնուց կամ կորիզ ունեցող մարդկային ձուի մը արգասաւորումէն զոյացած երկուորեակները այս երկրորդ տեսակին կը պատկանին։ Ասոնք թուով բոլոր երկաւորեակներու հարիւրին քսանը կը կազմեն և նկան երկուորեակներ կը կոչուին։ Ասոնք զէմքով, հասակով, շինուածքով, նկարագրով ու կարողութեամբ զարմանալի կերպով իրարու կը նմանին։ Մատերուն ծայրը մորթի վրայ գտնուող այն բարակ գիծերը որոնք տարբեր մարդոց վրայ երբեք իրարու չեն նմանիր և ամէն անհատ իրեն յատուկ դասաւորում մը ունի, նման երկուորեակներու վրայ այս

գիծերն անգամ իրարու կը նմանին։ Այս տեսակէն զոյգերը՝ յաճախ ծնողքներն անգամ չեն կրնար իրարմէ զանազանել։ Ծանչցած ենք այս տեսակ երկուորեակ զոյգ եղբայրներ՝ որոնց զաւակները իրենց հօրեղբայրը սխալմամբ հայրիկ կը կանչէին։ Այս տեսակ նման երկուորեակներ առտնց բացառութեան երկուքն ալ մանչ կամ երկուքն ալ աղջիկ կ'ըլլան։ Աստնց հոգեբանական զգացումներն ալ գրեթէ նոյն կ'ըլլան, անջատաբար իրենց պատմուած բան մը երկուքին ալ վրայ հողոյ խոր յուզումներ յառաջ կը բերէ, իսկ խօսուած մի ուրիշ եղելութիւն ահագին քրքիջներ կը պայթեցնէ։ Այս տեսակ երկուորեակներու նոյն նիւթի վրայ նամակ մը գրել տուր և յաճախ պիտի տեսնես որ գրուած գաղափարները թարգմանութիւն ըսուելու չափ իրարու մօտ են։ Կլիմայի փոփոխութիւններն անգամ այս տեսակ երկուորեակներու վրայ նոյն ազդեցութիւնը կը բանեցնեն, այնպէս որ շատ անգամ տարբեր քաղաքներու մէջ բնակելով իսկ երկուքն ալ նոյն ժամանակ նոյն հիւանդութեամբ կը վարակուին։

Երկու կորիզով բջիջի մը արգասաւորումէն նման երկուորեակներէ գատ իրարու կալած երկուորեակներ ալ կրնան ծնիլ։ Անոնք կուրծք կուրծքի կամ կունակ կունակի կալած կրնան ըլլալ, այսպիսիներ մինչև իրենց կենաց վերջը միասին ապրելու, միասին հիւանդանալու վերջապէս միասին մեռնելու ոտիպուած են։ Այս տեսակ երկուորեակներ հազուադիւրս են, բայց կան։ ասոնք ալ նոյն սեռի պատկանելէ գատ ամէն տեսակէտէ իրարու նման են, աստնցմէ ոմանք ամուսնացած և զաւակներ ալ ունեցած են։

Երկու կորիզով ձուի մը արգասաւորումէն կամ նման երկուորեակներ, կամ

կաած ու նման երկուորեակներ և կա՛մ ալ հրէշներ կրնան ծնիլ: Հրէշները երկու գլուխով, չորս ոտքերով կամ չորս ձեռքերով մարդկային էակներ են՝ որոնք չեն ապրիր և ընդհանրապէս մեռած կը ծնին: Հասարակ ժողովուրդը տարօրինակ երեւոյթները շատ մը արեղ ցբեղ կերպերով մեկնելու կ'աշխատի: Բայց բուն գիտական մեկնութիւնը սա է. ամէն երկու կորիզ ունեցող ձու բջիջ մը կ'արգաստուորի. այս բջիջը՝ եթէ կատարեալ բաժնուի, այն ատեն զոյգ մը նման երկուորեակներ կը գոյանան, եթէ կատարեալ չկարենայ բաժնուիլ մասամբ իրարու. կաած նման երկուորեակ մը կը ծնի. իսկ եթէ երբեք չկարենայ բաժնուիլ այն ատեն մէկ մարմնոյ վրայ մէկէ աւելի գլուխ և բազմաթիւ ձեռք ու ոտքեր ունեցող հրէշ մը կը ծնի:

Ամէն կերպով իրարու նմանող երկ-

ուորեակներէն գիտուններ շատ բաներ ուսած են: Վերջնականապէս հասկցուած է որ ժառանգականութիւն ըսուած բանը անուրանալի իրողութիւն մ'է և թէ մարդու մէջ գտնուող բոլոր յատկութիւններն ու կարողութիւնները՝ ըլլա՛յ ֆիզիզական, ըլլա՛յ բարոյական, ըլլա՛յ մտային՝ նախաբջիջներու կորիզին մէջ գտնուող գրամօսմ կոչուած շատ փոքրիկ հատիկներու միջոցաւ կը փոխանցուին: Նման երկուորեակներ նոյն բջիջէ սերած ըլլալով նոյն գրամօսմներէն ունենալնուն համար է որ ամէն կերպով իրարու յար եւ նման են:

Երկուորեակներու գոյութիւնը միայն մարդկային ցեղի յատուկ երեւոյթ մը չէ. բոյսերու եւ կենդանիներու մէջ ալ նոյն բանը նոյն օրէնքներով տեղի կ'ունենան:

(ՏՈՔԹ.) Ա. ՃԵՊԷՃԵԱՆ


ԹՈՎՄԱՍ ԱԼՎԱ ԷՏԻՍԸՆ

Գ. ՀԱՒԱՏՔԸ

Հետաքրքրական է գիտնալ թէ ի՞նչ էր այս մեծ մարդուն գաղափարը հանդերձեալ կեանքի և Աստուծոյ գոյութեան մասին:

Էտիսըն իր մտային բոլոր կարողութիւնները և երեւակայութիւնը կեդրոնացուց գիտական խուզարկութիւններու և գիւտերու վրայ, այնպէս որ գրեթէ ժամանակ չունեցաւ կրօնական և ընկերային հարցերով ու խնդիրներով զբաղելու: Շատ հազուագիւտ պարագաներու տակ միայն, այն ալ շատ անորոշ կերպով, յայտնեց իր կրօնական ըմբռնումները: Մինչև անգամ իր կնոջ և զաւակներուն չհամարձակեցաւ պատմելու իր խորհուրդները հանդերձեալ կեանքի և Աստուծոյ գոյութեան մասին:

Իր կեանքի վերջին տարիներուն ընթացքին, մահաւանդ անուան տարեգարձի օրերուն, մարդիկ խումբերով կուգային զինք այցելելու: Խմբագիր, թղթակից, գիտնական, դիւանագէտ և հոգեւորական՝ ամէնքը կուգային իր գաղափարը հարցնելու գանազան հարցերու շուրջ: Ընդհանրապէս Էտիսըն ամէնքն ալ կը գոհացնէր գրաւոր կամ բերանացի պատասխաններով. իր խօսքերը տարիներով թերթերու մէջ արձագանգ կը գտնէին: Սակայն երբ հարցը կրօնական նիւթի մը շուրջ կը դառնար, Էտիսըն կը ժպտէր այցելուին դէմքին աւ ժխտական ժեստով մը կ'երերցնէր իր ալեւոր դուխը, ըսելով թէ՛ չէր կըրնար իր գաղափարը յայտնել այդ մասին:



Բայց էտիսըն կը հաւատար գերա-
գոյն մտքի մը գոյութեան: Երբեք կը-
րօնական նախապաշարումներու և կամ
հաւատքի ըմբռնումներու ղէմ պայքար
չմղեց, որովհետեւ ինք այդ գործին
մարդը չէր: Իր միակ նպատակն էր բը-
նութեան գաղտնիքներուն տիրանալ
և զանոնք մարդոց օգտակար դարձնել:

Կառկած չկայ որ էտիսըն կը հաւա-
տար հոգիի անմահութեան, քանի որ
իր իսկ բերնով խօսեցաւ իր մահէն քա-
նի մը տարի առաջ: Օր մը՝ հարցուե-
ցաւ իրեն թէ՝ ինչպէս պիտի անցնէր
իր հանգեցածեալ կեանքը. էտիսըն խը-

րոխտաբար նապէս պատասխանեց.
«Փորձեր կատարելով»:

էտիսըն թէեւ չափազանց բծախնդիր
էր իր կրօնական գաղափարները արտա-
յայտելու մէջ սակայն երբեք անհաւատ
մը չէր: Զինքը մօտէն ճանչցողները
կը վկայեն թէ՝ էտիսըն կը հաւատար
Գերագոյն միտքի մը գոյութեան և մեծ
յարգանք ունէր Անոր նկատմամբ: Իր
կեանքը՝ պարկեշտութեան, սիրոյ և
մանաւանդ ծառայութեան կեանք մը
եղաւ, ինչ որ լրումն է «Բոլոր Օրէնք-
ներու և Մարգարէութեանց»:

Հէնրի Ֆորտ, էտիսընի միակ սրտա-

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Թէ՛մպրի՛ն համալսարանին աստղաբաշխութեան փրոֆէսորը սա կարծիքը կը յայտնէ թէ՛ տիեզերքը իրօք կը պայթի, և ծիրկաթինները անհուն արագութեամբ տիեզերքի մէջ կը ցրուին: Բայց տիեզերքը այնքա՛ն անհուն է որ երկիրը իրենց տարի կը պահանջէ որպէսզի այս պայթումի ազդեցութիւնները ակններէ ըլլան:

Քալիֆորնիոյ աստղադիտական աշխատանոցին մէջ մեծ այրող ոսպածեւ ապակի մը կը շինուի, որ բաղկացած է տասներկու մեծ և փոքր ապակիներէ: Այս ապակին ճառագայթները կեդրոնացնելով պիտի արտադրէ 10,000 աստիճան (ֆարէնայթ) տաքութիւն մը: Այս գործիքով աստղաբաշխները մօտէն պիտի կրնան սերտել տարբերութիւնները, երբ այս բարձր աստիճանի ջերմութեան ենթարկուին:

Արքանսասի մէջ գտնուեցաւ նախապատմական Հնդկիկներէն մնացած տասներկու անհատներու ոսկորները: Զարմանալի է որ ցարդ կատարուած պեղումներէն երեւան եկած ոսկորներէն ոչ մէկուն կը նմանին: Անոնք չեն նմանիր ո՛չ քարայրներու մէջ բը-

կիցը, մեծ հնարիչի մասին այսպէս կ'արտայայտուի. «Մենք յաճախ կը խոսէինք կրօնական խնդիրներու շուրջ և իմ համոզումս այն է թէ՛ էտիսըն բառին իսկական առումովը հոգեւոր մէկն էր, որովհետեւ մեծ յարգանք թանկ տիեզերքի հրաշագործ, ստեղծագործութիւններուն և անոնց վեհ նպատակին հանդէպ: Անիկա կը հաւատար հոգիի անմահութեան»:

Ամերիկեան Գոյեհն Հայկայ Յ. ՄԱՍՐԷՍՆ
—Վերջ—

նակող նախնական մարդոց, ոչ ալ կողով շինողներուն և ո՛չ ալ լեռնահսկաներուն: Քաղաքակրթութեան տէսա կէտով միւս հնդկիկներէն ետ են մնացած: Թէ՛ ո՞ր դարուն ապրեցան այս մարդիկ՝ գիտուններուն համար հարց մըն է:

Մասնաւոր բժշկական գործիք մը հնարուեցաւ որ կրնայ որոշել շնչերակներու կարծրութեան գոյութիւնը, մինչդեռ բժիշկ մը չի կրնար որոշել զայն իր սովորական փորձերով: Միայն գործիք ևս հնարուեցաւ որ ինքնաբերաբար կ'արձանագրէ գործողութեան ենթարկուած հիւանդի մը սրտի տրոփիւնները: Այս գործիքով բժիշկը գիւրաւ կրնայ գիտնալ թէ՛ ի՞նչ վիճակի մէջ է հիւանդին սիրտը առանց գործածելու իր կրծագէտ գործիքը:

Տուներու մէջ բացարձակապէս արգելելու է պզտիկ տղոց իրենց թեւերէն բռնելու և օրօրելու սովորութիւնը. պզտիկը որչափ որ ալ պաղատի պէտք չէ անոր խօսքին անսալ: Որովհետեւ թեւի ջիղերը այսպէսով պիտի փնասուին. թէ և անմիջական կերպով փնասը յայտնի չըլլար, սակայն ժամանակ մը ետքը՝ եթէ ջիղերը շատ փնասուած են՝ մանուկը անդամալուծութեան կ'ենթարկուի եւ շատ հաւանական է որ չպիտի կրնայ ապաքինիլ:

Քորնէլի քիմիաբանները 87 երրորդ տարրը գտան: Անցեալ տարի Շէփիտոլայթ և Փոլիսայթ կոչուած նիւթերուն մէջ քիմիաբանները այս տարրին գոյութիւնը զգացին բայց չկրցան գրտնել զայն: Այս նոր տարրը Քլեքսքասիւմ կ'անուանուի:

Անգլիացի գիտուն մը ծաղկախտին մանրէն գտած է, որ հաւանական կը թուի ըլլալ գնդաձեւ մարմին մը որուն տրամագիծը միլիմէթրի մը յիսուն հա-

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԴԵՐ ԽԱՂԱՑՈՂ ՄԵԾ
ԴԷՄՔԵՐ ԵՒ ԴԷՊՔԵՐ**

**Ց. ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՀ ՊԻՒՐՈՍԻ
ԹԱԳԱՒՈՐ ԵՊԻՒՐՈՍԻ**

Յունաստանի հիւսիսային կողմը երկրամաս մը կար որ կը կոչուէր Եպիւրոս։ Այս երկիրը Օսմանեան կայսրութեան Եանիայի վիլայէթին կը համապատասխանէր։ Այս երկրամասը երկաթ ժամանակ միւս Հելլէն պետութիւններու հպատակ մնալով հելլէնական քաղաքակրթութեան մէջ մեծ դեր մը չխաղաց և կղզիացեալ վիճակի մը մէջ ապրեցաւ։ Կը տեսնենք թէ Բրիտանիոյ չորս դար առաջ իր անկախութիւնը ստացած սկսաւ երեւան գալ պատմութեան թատերաբեմին վրայ։ Այս տէրութեան ժողովուրդը կը բաղկանար 3 ցեղերէ։ — Հէլլէնք, Բելապետներ և Իլլիրացիք։ Այս տէրութեան առաջին թագաւորը կը կոչուէր Աղեքսանդր, Մեծն Աղեքսանդր Մակեդոնիացիի մօրը՝ Ողոմպիայի՝ եղբայրը, որ իշխեց (Ն. Ք.) 336—326 թին։

զարէն մէկին հաւասար երկայնութիւն կրնայ ունենալ։

Բատիում կոչուած խիստ հազուագիւտ նիւթը ինքնիրմէ երկար ժամանակ տաքութիւն կուտայ։ Մէկ կրամ բատիում 250, 000 անգամ աւելի տաքութիւն կուտայ քան մէկ կրամ անոթիւր։ Այս նիւթէն Պելճիկայի և Փոլոնիայի մէջ գտնուեցաւ ասկէ մի քանի տարի առաջ։ Բայց շնորհիւ վերջերս եղած հետազոտութիւններու փանաւայի մէջ հանք մը գտնուեցաւ, որ նոյնիսկ Պելճիքայէն ալ աւելի բատիում պիտի արտադրէ աշխարհի։ Ասկէ արտադրուած բատիումի արժէքը միլիոնաւոր տոլարներու կը հասնի։

Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

Պիւրոս, (Ն. Ք.) 295 թն Եպիւրոսի գահը բարձրացաւ։ Թէպէտե Պիւրոս կը պնդէր թէ ինք Աքիլլէսի սերունդէն եկած էր, բայց իրականին մէջ ինքը վերոյիշեալ Ողոմպիայի եղբօր Աղեքսանդրի ընտանիքին զաւակն էր։

Պիւրոս ալ կարող և հանճարեղ հրամանատար մըն էր։ Աննիպալ սապէս կը վկայէր. «Աշխարհիս ամէնէն մեծ ուղմամարը Մակեդոնացի Մեծն Աղեքսանդր էր, երկրորդը Պիւրոս և երրորդը ես եմ»։ Պիւրոսի խորհուրդներն էին, Հռովմայեցոց վրայ յաղթանակ տանիլ, ամբողջ Իտալիան նուաճել, Կարկեդոնական պետութիւնը գլխի և յետոյ հայրենիքը զառնալ և իւր յաղթական բանակին մէկ հարուածովը ջախջախել Մակեդոնիան և Յունաստանը և ըլլալ Արեւմտեան Աշխարհի «Մեծն Աղեքսանդր»ը։

(Ն. Ք.) 280 թն, իւր քաջամարտիկ զինուորներով Հռովմէական սահմանը անցաւ։ Իր բանակը զարգարուած էր զրահապատ փղերով և անդրդուելի փաղանդներով։ Այն յաղթեց Հռովմէացոց։ Երկրորդ անգամ, Ն. Ք. 279 թն, նորէն պատերազմեցաւ և յաղթական ելաւ, բայց վճռական յաղթանակի մը չսպասելով՝ անցաւ Սիկիլիոյ կղզին և սկսաւ պատերազմիլ Կարկեդոնացոց դէմ Հէլլէններու հետ։ Հոս ալ կոտարեալ յաղթութիւն չտարած յարձակեցաւ Հռովմայեցոց վրայ, բայց այս անգամ, պարտուեցաւ և վերադարձաւ իր հայրենիքը։

Յետոյ, բանակ մը վերակազմեց և սկսաւ արշաւել Մակեդոնիոյ, Պեղեպոննէսի և Սպարթայի վրայ։ Այս միջոցին Արկոս քաղաքը մտնելով սաստիկ կռիւի մը բռնուեցաւ և նոյն ժամանակ, կին մը աննիքէն կղմինտրի խո-

չոր կտոր մը ձգեց Պիւրթսի գլխուն, ուրը՝ վերաւորուած ինկաւ իր ձիէն: Սն-միջապէս թշնամի զօրքեր տաքի վրայ կանգնելու ժամանակ չթողւով զինքը կտոր կտոր ըրին: Ահա այսպէս (Ն. Ք.) 242ին Պիւրթս մեռաւ: 46րորդ տարիքին մէջ ինկաւ այդ մեծ ռազմագէտ թագաւորը՝ որ կ'սպառնար գրաւել Դանուբի հովիտէն մինչև Սպանիա և

Արշիպիղագոսի Արեւելեան ծովերէն մինչև Մարոք: Ահա այս անգամ ալ ազատութեցաւ Կեսարնիքու աշխարհը: Եթէ Պիւրթս աւելի երկար տարիներ ապրած ըլլար, և կամ Հռովմայեցեաց վրայ յաղթանակ տանէր, ազգաց տարեգրութիւնները ինչպէս պիտի գրուէին ունէ մէկը չկրնար կատարելապէս ըսել:

Կ. ԳՈՒՆՏՍՈՒՅԺԵԱՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՏԻՊԵՐ

Շատ իմաստուն կեցուածք մ'ունէր... երբ խօսիս ճիշդ բերեալով մէջ կը նայի և արդէն գուշակած է ինչ որ պիտի խօսէիր:

Իբր մարդ արարած մասնաւոր թեութիւն մը չունի, միայն սաստիկ մոռացկոտ է, երբ պիտի մը կամ, Աստուած չընէ գումար մը փոխ տաս, վըտտահ հղիւր որ զայն անգամ մ'ալ չպիտի կարենաս վերստանալ:

Շատ վայելուչ է, բառին բովանդակ իմաստով, մասնաւոր՝ երբ իր սեւ լայն թիթեռնիկ փողկապը կապէ, ճիշդ տասը և իններորդ դարու հայ դերասանի մը կամ բանաստեղծի մը հովերն ու երեսոյթը կ'զգենու: Փողոցը քալած ատեն շատ վայելչօրէն կ'ընթանայ, մէկ ձեռքը միշտ թղթապանակ մը և կամ ուրուսն թուղթ մը բռնած:

Իր հանրածանօթ յատկանիշներէն մին է, քալած ատեն ետին դառնալ ու անցորդներուն նշանակալից նայուածք մը նետել, հասկնալու համար թէ արդեօք իրմով կ'զբաղին և իր շարժումները կը հաւնին, և կամ իր կօշիկներուն փայլուն ու նոր ըլլալը կ'զգան: Սա ալ աւելցնեմ որ՝ թէեւ մէկ աչքը միշտ անցորդներուն վրայ է, բայց միւսով հրեք չի թերանար հրեմն գննել կօշիկները, որոնք փայլը եթէ արկածով մը նսեմացած է անկիւն մը քաշուելով

կը սրբէ մասնաւոր լաթով մը որ իր գրպանին յաւիտենական բնակիչներէն է:

Սոսակցութիւնը շատ վառվռուն է և համարձակ, յաճախ անոր ազդու և իրական ձեւ մը տալու համար շատ մը նշանաւոր հեղինակներէ առակներ եւ իմաստալից խօսքեր կը մէջբերէ:

Չմոռնանք ըսել թէ՝ մեր պարոնը գրչի մարդ է, մէկ նստելով էջեր կը լեցնէ ու... զանոնք ձրիաբար կը տրամադրէ առաջին առթիւ հանդիպող բարեկամներու: Տակաւին աւելին ալ կայ, շատ բարի ըլլալուն համար, ձեռագիրը տալէ առաջ կը ջանայ հասկցնել անոր բովանդակութիւնը, խորհելով թէ՝ միայն ինք կը հասկնայ: Իրականութիւնն ալ այդպէս է. այնքան բարձր թռիչքներ կ'առնէ իր գրութիւններուն մէջ որ՝ մարդ չնաշխարհիկ գուշակի մը կարողութիւնն ունենալու է որ այդ լաթերին թոսին խորը թափանցէ:

Օր մը, չեմ գիտեր ինչպէս եղաւ, իր ոտանաւորներէն մին ձեռքս անցաւ. եթէ չեմ սխալիր խորագիրը «Մուկն ու կատուն» էր: Ծշմարիտ գիցաբանական գիւցազներգութիւն մը, ուր կատուն պատկերացուած էր իբր չար ու անգութ Ահրեմանը, իսկ մուկը՝ բարի ու հէզ փոքրիկ ոգի մը՝ մարդ արա-

ՀՈՈՎՄ

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԻՆ ԱՏԵՆ

Ամերիկեան Թին Բրիսլըն Հէրալտ ամսաթերթի «Թին Մարչ ալ Իլէվըն Մէն» յօդուածին Յիսուսի ժամանակակից Հոովմի նմանին եղած մէկ ամփոփումն է հետեւեալ գրութիւնը: Յիսուսի ծնունդին նշանակութիւնը եւ քրիստոնէութեան կատարած քաղաքակրթիչ դերը հասկնալու համար անհրաժեշտ է հետնոս Հոովմի նման տեղեակ ըլլալ Ծ. Խմբ.

Հոովմ բոնասպէս մ'էր, ան աշխարհի իշխեց զոքը անոր վիզին վրայ ըլլալով: Կարթագինէ համարձակեցաւ անոր հակառակելու, եւ բնաջնջուեցաւ, հրդեհուեցաւ եւ հիմնայատակ քանդուեցաւ: Հոովմայեցիք բոլոր աշխարհի ծանօթ էին իբր սարսափազգու կարճթուրի դեսպանները. անոնք տմէն ժողովուրդ նուաճեցին եւ շղթայեցին՝ հռովմի մէջ զանոնք իբր գերիներ ծառայեցնելու համար:

Հոովմ աշխարհի ամէն կողմերը ճախրայ շինող էր. ուր ուր հռովմէական լէգէոնները գացին այդ մշտնջենական ճամբաները միասին գացին: Անգլիայայէ մինչեւ Պաղտատ այդ ճամբանե-

րածը...

Ամէն պարագայի տակ, Պր. Բ. որպէս ազգասէր մարդ, իր գրութիւնները երբեք չի զլանար հայ թերթերուն տալ: Բայց աւա՞ղ... Ի՛նչ օգուտ որ Հայ ազգը ապերախտութեամբ կը վերաբերուի անոր փափուկ սրտին հետ, ու այդ թանկագին գոհարները չի հրատակեր, ու զինք չի քաջալերեր: Արդէն այս պատճառաւ չէ որ հայ ազգը չզարգանար ու Հայ գրականութիւնը չի բարուաբար զարգացնուիր:

Ամերիկեան Դոյզն ԲԱՅՅԻ ՏԻՔԻՃԵԱՆ
Հայկ

րու կը հանդիպինք այսօր:

Հոովմ ճարտարապէս եւ շինող մ'էր: Ան հաւատալի ջրմուղներ ըլլալն եղէն վարանոր երկու միլիոն բնակչութեան ջուր կը տանէին: Հսկայաշէն, քարով կամարակապ կոյուղիներ, որոնց մէջէն կ'օգտուէր կրնար անցնիլ, անոր փողոցներուն տակ լարիւրինդոս մը կը կազմէին: Ամէն տուն օժտուած էր ջուրի խողովակներով եւ ցոյտադրուներով, զարգարուած՝ գեղարուեստական առարկաներով: Հոովմի մէջ երեք թատրոն, մէկ ամփոթատրոն, հարիւր տաճարներ կային. հոն էին ֆորումը, կապիտոլը, կեսարներու պալատները:

Հոովմ հին աշխարհի գրաստանն էր: Անվերջ կառարչաւի եւ սուսերամարտի հանգէսներ, եւ հանրային խնջոյքներ կը սարքուէին: Կրասոս, որ Պոպուսի Հրոովմ եկած ատենը կենդանի էր, իր միլիոններու հասնող հարստութեան մէկ տասներորդը ժողովուրդին տուաւ, անիկայ տասը հազար սեղաննոց խնջոյք մը սարքեց, բոլոր քաղաքը երեք ամիս կերակրեց: Կեսար, 65 թուականին, սուսերամարտի հանգէս մը տուաւ, որուն միջոցին սուսերամարտ գերիներու 300 զոյգեր մինչեւ իրենց մահը կոռուեցան: Երբ ամբողջ գերիներէ ձանձրացաւ, վայրի գազաններ — փիղեր, վագրեր, կոկորդիլոսներ եւ առլւծներ — սուսերամարտի թուրին գէմ կոռուեցան, մինչ բուն գազանը, Հոովմէական խաւանը, տրիւնը տեսնելով խենդօրէն կը պոռար:

Բայց Հոովմ աշխարհի քարտաշին ալ էր: Ան երկիրները իրարու կապեց հիանալի պողոտաներով: Անիկա մեզի տնջին օրինակիւրք մը տուաւ. Հոովմ աշխարհի մեծագոյն օրէնսդէտ ազգն էր: Հոովմէական օրէնքը մինչեւ այսօր տակաւին

ՅՈՒՍԱՆԻՆ ՏԱՌԱՊԱՆԲԸ

Ով կիւանին փորձութեան խոր ալիքներն ամեհի
Կասկածի թուխ ամպրոպներն—առեղծուածներ զժպհի—
Կը վրդովեն տարօրէն անդոհական մոլուցքով
Խաղաղութիւնն հոգիիս և անդորրութիւնն ապահով:

Տառապանքներ բազմանուն—չար ոգիներ խուզարկու—
Արհաւիրքներ բերանուն—սեւ ստուերներ ժանտ մահու—
Կը մթագնեն խորանը իմ հոգիիս տաճարին
Ու հաւատքիս կախ ջահերն մէկի՛կ մէկի՛կ կը մարին:

* *

Սակայն հոգիս երկնատենջ չ'ուզեր ըլլալ առաթուր.
Տառապանքին կուրօրէն չ'ուզեր ըլլալ անձնատուր.
Զի փորձութիւնն պարտուած՝ առեղծութեան հոգեկան
Խոր հիմունք մը կը դնէ հոգիին մէջ յաղթական:

Ուղի՛ղ մեկնիլ արուեստ մ'է ա՛յդ բախումները փորձութեանց,
Քանզի անձնիւր յաղթական կ'ապահովէ փառապանծ
Բարոյական կորովի յաղթանակներ նորանոր,
Եթէ կոչենք օգնութեան խնայութիւնը Անոր:

Փորձութիւնն է մթագոյն լինիլ առանց փորձութեան,
Տառապանքին հալոցէն անցնիլ պարտինք անպայման.
Տառապանքով կը ձուլուի նկարագիրն հզօր հաստատ.
Հարուածներէն քամիին կաղնին դնէ խոր արմատ:

Փորձութեան դէմ Հայորդի՛, սորվէ՛ կռուիլ դու անվերջ,
Թուխ ամպերուն ընդմէջէն դիտել Աստղին քու անշէջ:
Ծաղիկները կը ծլին տառապանքէն օրհնածիր
Մեր Յոյսերուն կենսատու, խնկարուբեան, լուսածին...:

Հ. Թ.

կ'արձագանգէ Եւրոպայի և Ամերիկայի
օրինագիրքերուն մէջ, Հռովմ աշխար-
հը աւելի ապահով տեղ մը ըրաւ ապրե-
րելու համար, մաքրելով ջուրերը ծո-
վահէններէն և ճամբաները՝ աւագակ
ներէն: Անիկա հաստատուն կառավա-
րութիւն մ'ունէր: Այդ զօրաւոր, կեղ-
րոնացեալ և կարող կառավարութիւնը

աւելի ընդարձակ տարածութեան վրայ
և աւելի մեծ թիւով մարդերու և լե-
զուներու վրայ իշխած է քան ուէ մէկ
ազգը: Հռովմ՝ իբր բռնակալ, իբր ճար-
տարապետ, իբր կառավարիչ, իբր օ-
րէնսդիր և իբր զրօսասէր հոյակապ և
փառաւոր էր: Բայց Հռովմ աղտոտ ալ
էր:
(Շար. ը յաջորդիւ)

ԴԷՊԻ ՎԵՐ...

ՀՍԿՍՑ ՄՈՂԷՍԸ

Յաւոտ կեանքի այս նըսեմ
Յաւերն վիշտերն կ'անհետին,
Երբոր հասնինք նոր եղեմ,
Լի պերճանքովն անհունին:

Արեւ, աշխարհ, հաճոյք սին,
Հոս հըրապոյր ա'լ չունին,
Հոն սիրելիք, փառաց Տէր՝
Մեզ կ'ողջունեն համակ սէր:

Բիւր յոյգերու տակ կըքած
Մեզաց աշխարհ ենք լըքած
Աչքերըն մեր միշտ յարած

դէպի վեր...

Վըճարուած է մեր փրկանք
Խաչին վըրայ արեամբ թանկ,
Խոր հաւատքով մենք կերթանք,
դէպի վեր...


Աստղը պայծառ մեզ առաջնորդ
մենք ունինք,
Ձայնը սիրուն զոհուած Գառին
կը լսենք—...

Դուք սիրելի անմահներ,
Մի' թափառիք հեռուներ,
Ձեզ պատրաստ կան օթհակներ,
եկէ՛ք վեր:

Կիւղիթթ. Թ.

2 Նոյս. 1931

Համլին Սանաթօրիում
Համմանա.



Այս մողէսը գիտուններուն ծանօթ է պրոնքոստրա անունով: Այս հսկայ սո-
դոմինոս ոսկորները գտնուած են Մ. Նա-
հանգներու մէջ, 1881 ին, և 1901 ին մա-
սամբ կըցած են անոր կմախքը վերա-
կազմել բայց գործը կիսատ մնացած է:
Բայց հիմա այդ կմախքը վերարտադրե-
լու գործը աւարտած է: Այս գործո-
ղութիւնը լման երեք տարի տեւած է:

Այս զագանին հսկայական կազմին
մասին գաղափար մը տալու համար կը
բաւէ յիշել հետեւեալ մանրամասնու-
թիւնները: Այս հսկայ մողէսին կմախ-
քը կը կշռէ վեց ու կէս թոնո. քաւիմն
բոլոր մարմինը պէտք է 40 թոնո կշռած
ըլլայ, կը հաշուեն գիտունները: Կը-
մախքին բարձրութիւնն է 16 սաք, իսկ
երկարութիւնը՝ 70 սաք: Եթէ հիմա
ապրէր՝ 85 սաք երկարութեամբ անիւ-
ներու վրայ դրուած վանդակի մը մէջ 80
ձիեր հազիւ պիտի կարենային զայն
կրկէսը բերել: Ասիկա կ'ապրէր լիճերու
մօտ, իր սնունդը քաղելով լիճերու յա-
տակէն և ծառերէն զոր իր ոտքերով
արմատախիլ կ'ընէր: Մանր ակունե-
րը կը ցուցնեն թէ բուսակեր է: Այս
հսկան օրական 360 հոգա բուսիկէն
պէտք է սպասուած ըլլայ ապրելու հա-
մար: Փիղը հազիւ օրական 90 հոգա
կ'ուտէ: Կրնայ 25 թոնոնոց ծանրու-
թիւն մը քաշել: Այս հսկայ մարմինը
հազիւ մօտ 300 տիրհէմ (900 կրամ)
ծանրութեամբ ուղիղ ունի. (մարդկա-
յին ուղեղի միջին ծանրութիւնը 1400
կրամ է, առաւելագոյնը 1700 էն աւելի
է): Գիտուններու կարծիքին համե-
մատ այս մողէսը ասկէ 120 միլիոն
տարի առաջ ապրած է, և իր ցեղը 100
հազար տարի իր գոյութիւնը պահած
է երկրի վրայ: Ներկայիս իր ամէնէն
մօտ ազգականներէն են ջայլամն ու
կոկորդիլոսը:

ՄԵԾՆ ՆԱԲՈՒԼՈՆԻ ԴԻՐՔԵՐԸ

Մեծն Նաբոլէոն կ'երեւի թէ գրամու
մէջ. անիկայ՝ բացիկարգ մը պետական
գրադարաններէ՝ կազմած էր նաեւ թէ՛
անշարժ և թէ՛ փոխադրելի անհատական
գրադարաններ: Նաբոլէոն Ա. ի գոր-
ծածած գիրքերուն մեծ մասը ցրուած
և կորսուած է: Վերջերս, սակայն, այս
մեծ Դորսիքացիին սեպական գրադա-
րանին շատ կարևոր մէկ մասը երեւան
հանուեցաւ Պերլինի հնախոյզներէն
Մարթին Պրէսլաւըրի միջոցաւ: Աւստը-
րո-Հունգարիոյ վերջին զահնկէց կայս-
րուհին Զիթա զրամի պէտք ունենալով
12000 հատորներէ բաղկացեալ գրադա-
րան մը ծախու հանեց Պերլինի մէջ:
Դիրքերուն վրայ եղած նշաններէն
յայտնի եղաւ որ ասոնք Մեծն Նաբոլէ-
ոնի և մասամբ Մարի Լուիզի՝ իր երկ-
րորդ կնոջ՝ կը պատկանին: Բոլոր հա-
տորները Նաբոլէոնի կ'մ գինանշանը
կ'մ կնիքը և երբեմն ալ երկու նշան-
ներն ալ միասին կը կրէին: Նաբոլէոնի
և Լուիզի հասարակաց գրադարանին
հատորները իրենց ոսկիէ գինանշաննե-
րը կը կրէին: 3500 հատորները Մարոքի
կաշիով կազմուած, ոսկիով պերճօրէն
զարդարուած են լաւագոյն վարպետնե-
րու կողմէ: Ներկայիս բոլորին համար
250 հազար տոլար (312500 սուրի ոսկի)
կը գնահատեն: Բնականոն ժամանակ
մը անկէ շատ աւելի պիտի արժէին ա-
նոնք: Նաբոլէոն ինքը այս գիրքերէն
մէկուն, Դլէրիստայի «Փրանսայի հնու-
թիւնները» երկին երկու հատորներուն,
1020 ֆրանք վճարած էր: Դիրքերը
զատ զատ պիտի ծախուին՝ բոլորը մէ-
կէն գնող մը չգտնուելուն համար:
Դիրքերուն հետ միասին կը ծախուին
1200 սնտուկներու մէջ 6000 ռազմական
քարտէսներ, որոնց մեծ մասը Նաբոլէ-
ոնեան պատերազմներու շրջանին կը
պատկանին, հետեւորար մեծ լոյս պի-

տի սփռեն պատմութեան վրայ: Նախ-
կին կայսեր մը այս թանկարժէք գիր-
քերը, ուրիշ շատերուն նման այս կեր-
պով պիտի ցրուին և կորսուին՝ զա-
հընկէց կայսրուհիի մը ապրուստի մի-
ջոց ստեղծելու համար:

ՀԱՅ ԿԵԱՆՔ

ՀԱՄԱՆԱՅՍ Ամերիկեան Թոքախտա-
նոցին հիւանդներէն Պր. Կիւպերթ Թո-
փալեանի նամակէն կը քաղենք հետեւ-
եալը.

Հիւանդանոցը ներկայիս կը գըտ-
նուին հարիւրէ աւելի հիւանդներ, ո-
րոնցմէ 32 հատը Հայեր են, 16 այրեր
և 16 կիներ կան: Հիւանդանոցը 3
կարգի հիւանդներ կը պահէ, private,
և semi — private, և երկրորդ կարգի,
որոնց կերակուրները երեք աստիճան
են. Հայերու մէջ բացի մէկէն, Կիւպ-
րահայ պատանի մը՝ որ semi — private
խնամք կ'ստանայ՝ բոլոր մնացածներս
ալ երկրորդ կարգի ենք:

Կերակուրները ընդհանուր առմամբ
զոհացուցիչ են, բայց բաւական չեն
հիւանդի մը բոլոր պէտքերուն: Ուստի
հիւանդներէն շատերը ստիպուած են
դուրսէն հայթայթել շատ օգտակար նը-
կատուած ուտելիքները: Հայերու մէջ
կան բարեկեցիկներ և նոյն ատեն ալ՝
կարօտներ, որ զուրկ կը մնան այս տե-
սակ աւելորդ սնունդէ:

Հիւանդներուն շատերը մարմնով լաւ
վիճակի մէջ կը գտնուին, դէմքերուն
եթէ նայուի երբեք հիւանդի երեւոյթ
չեն ցոյց տար: Ունինք հիւանդներ ո-
րոնք կը կշռեն 75 քիլո, բայց և այնպէս
կատարեալ հիւանդ են իրենց թոքերը:
Հիւանդանոցի բժշկական խնամքը յանձ-
նուած է Տոքթ. Նուխոյին, որ միեւ-
նոյն ատեն պատասխանատու տնօրէն
է. թէև Ամերիկեան խնամակալուի իւն

մը կայ և որպէս ներկայացուցիչն է Mrs Lancing, պարգապէս գոյութիւն մը ունի: Ունինք նաև ներքին տեսչուհի մը, Miss Haddad:

Տոքթ. Նուխո հիւանդանոցը կ'այցելէ ամէն Շաբաթ և Զորեքշաբթի կէսօրէ ետքը միայն. որով ամբողջ գործը յանձնուած է Օր. Հատտատի, ներքին տեսչուհիին, որ բնիկ Պաղեստինցի մըն է:

Կան տասը հիւանդապահուհիներ և զիշերապահուհի մը, որոնցմէ չորսը Միւրիացիներ են, իսկ մնացածը՝ Հայեր: Երկու գլխաւոր հիւանդապահուհիներ (head nurse) ունինք, երկուքն ալ Հայ, մին՝ չըջանաւարտ Անգլիայէն, իսկ միւսը՝ Պէյրութի Ամերիկեան հիւանդանոցէն: Ասանցմէ Օր. Գեղանուշ դեղերով կ'ըրաղի, իսկ բուն պատասխանատուն Օր. Նուարդն է, որ ազնիւ բնաւորութեամբը, պարտաճանաչութեամբը եւ անաչառ խնամքին և հոգատարութեան պատճառաւ հիւանդներէն սիրուած է:

Կիրակի առտուններ ժամը իննին Պըհամտունի Երիցական Ժողովարանի քարոզիչը կուգայ և կարճ պաշտամունք մը կը կատարէ արաբերէն լեզուով զոր գժբախտաբար Հայերս չենք հասկնար, հետեւաբար շաբաթներ ամբողջ բարոյալից բռն մը չենք լսեր:

Հայ հիւանդներ ունինք ամէն կողմէ, Կիպրոսէ, Եգիպտոսէ, Հալէպէ, Պէյրութէ և ուրիշ տեղերէ: Իւրաքանչիւրն ունի իրեն յատուկ յուզիչ պատմութիւնը:

Կը խնդրենք որ մեզի կարեկցող բուրբարեկամներ չի մոռնան իրենց աղօթքներուն մէջ մեզ թշուառներս ալ յիշել, կարելի է Տէրը կը լսէ աղօթքը հաւատացեալի մը, և մենք ալ կը փրկուինք: Մեր սենեակին մօթօն ընարած ենք «Տէր ինչպէս որ կ'ուզես» նախադասութիւնը, իմ սենեկակից կաթոլիկ երիտասարդին հետ, և միշտ կ'աղօթենք, որ Իր կամքը թող ըլլայ:

ՍԵԼԻՄԻԹԵՅԻ Տէջ, Հոմայի մօտ, 20ի չափ հայ ընտանիքներ կան, մեծ մասամբ Այնթապցի և Մարաշցի: Հայ Աւետ. ընտանիքներու թիւն է երեք:

1920ին Վեր. Ս. Ս. Մանուկեանի և 1929ին երկու հոգեւոր գործիչներու այցելութիւնը վայելցինք: Ատկէ ի վեր հոգեւոր գործիչ մը չտեսնուեցաւ այս կողմերը:

1927ին Սուրիոյ Հայ Աւետ. Միութեան Պէյրութի Շրջանին Վարչութեան կողմէ վարժուհի մը ղրկուեցաւ հոս: Այս կարգադրութիւնը տարի մը աւելց միայն: Հիմա ամէն տարի Հալէպի Առաջնորդարանէն թէպէտ վարժուհի մը կը ղրկուի, բայց արաբերէն և ֆրանսերէն չգիտնալուն համար ծընողները ստիպուած իրենց մանուկները ուրիշ տեղերու դպրոցներուն կը ղրկեն:

Ե. ՏԵՄԻՐՃԵԱՆ

ՀԱԼԷՊ ԷՄՄԱՆՈՒԷԼ Հայ Աւետ. Եկեղեցիին համար Դեկ. 24ի և 27ի իրիկունները նշանակալից եղան: Ֆրանսական բանակի Մատակարարցի Աւետարանական զինուորները, որոնք ամէն կիրակի մեր եկեղեցիին մէջ իրենց հոգեւոր հաւաքոյթը կ'անենան, իրենց Հալէպէ մեկնումին առթիւ խնդրեցին որ Ս. Հաղորդութեան պաշտօն կատարուի իրենց համար: Եկեղեցիի հոգաբարձութիւնը յարմար դատեց որ զինուորներուն փափաքին գոհացում տրուի և ապա Ծնունդի ծառ մ'ալ զարդարուինոնց համար: Դեկտ. 24 ի իրիկունը զինուորները ժամը 5էն մինչև 8 աղօթքով պատրաստուեցան Հաղորդութիւն համար, ու ժամը 8ին իրենց սենեակէն ելլելով Հաղորդութեան սեղանին դրանուած սրահը եկան: Մեր ժողովուրդէն շատեր ներկայ էին: Զինուորներէն երկուքը հաստատ հանգանակը ընդունելով եկեղեցիի անդամ եղան, և

տառը հատը Հաղորդութեան մասնակցեցան: Բոլորն ալ լրջօրէն մտիկ ըրին Մալկաշ լեզուով երգերուն, աղօթքներուն և թարգմանի միջոցաւ իրենց եղած խրատներուն: Այսպէս վերջացաւ Հաղորդութիւնը, որ կատարուեցաւ Վեր. Ս. Ս. Մանուկեանի միջոցաւ:

Ապա Ծնունդի ծառը ղարդարուեցաւ և թէյ, չաքարեղէն, նարինջ և ֆրանսերէն ու մալկաշերէն Աւետարաններ բաշխուեցան զինուորներուն: Մենք Հայերս այս հաւաքոյթէն շատ գոհ մնացինք. բայց զինուորները շատ զգածուեցան և կրկին ու կրկին իրենց շնորհակալութիւնը յայտնեցին: Երգէ մը և աղօթքէ մը հոգ ժամը 11ին իրարմէ բաժնուեցանք:

Զինուորները բաժնուելու ատեն մեզմէ խնդրեցին որ Դեկ. 27 ի իրիկունը մենք ալ իրենց կողմէ սարքուելիք նման հաւաքոյթի մը մասնակցինք: Ուրշեալ ժամանակին խառն ժողովի անդամներուն ընտանիքներէն 35 մանուկներ, 30 ի մօտ կիներ և այրեր և 16 Մալկաշ զինուորներ ներկայ էինք:

Զինուորներէն մէկը աղօթքով մը բացաւ հաւաքոյթը: Ուրիշ զինուոր մը խօսեցաւ թէ ինչու մեզ հրաւիրեցին և յայտնեց մեզի հանդէպ իրենց ունեցած սէրը: Մալկաշերէն երգերէն հոգը թարգմանի միջոցաւ իրարու հետ խօսակցութիւն և տեսակցութիւններ եղան:

Ապա պատիկներուն տոպրակներով չաքարեղէններ, պիսքուիթներ, պատկերներ և նարինջներ, իսկ մեծերուն՝ խմորեղէններ, նարինջներ և այլն բաշխեցին:

Փոխն ի փոխ հայերէն և մալկաշերէն երգեր եղան: Ապա Վեր. Ս. Ս. Մանուկեան զինուորներուն ուղղեալ մի քանի խօսքեր ըսաւ «Մենք ձեզի Ազգական ենք» նիւթին շուրջ: Վերա-

պատուելին յայտնեց թէ մեր այս ազգականութիւնը չի կայանար նոյն գոյնը, ցեղը, ազգը և պաշտօնը ունենալու հանգամանքին մէջ: Անոր հիմը հոգեւոր է, որ կը գտնուի հաւատքի և Յիսուսի արիւնին մէջ, Յիսուսի Թագաւորութեան համար գործակցութեան և դէպի երկինք ուղեկցութեան մէջ և վերջապէս երկինքի մէջ բնակակազմից ըլլալու մէջ: Ապա ոտքի վրայ «Ալ մօտ ըլլամ Գեղի» երգը երգեցինք հայերէն, թրքերէն և մալկաշերէն լեզուներով և աղօթքով մը վերջ տուինք այս խիստ հաճելի հաւաքոյթին:

ՆԵՐԿԱՅ ՄԸ

ՀԱԼԷՊ ԷՄՄԱՆՈՒԷԼ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏՂԱՅՈՅ ԶԱՆԻՑԻՆ ԿԵԱՆՔԷՆ

Էմմանուէլ եկեղեցւոյ երիտասարդաց Զանից Ընկերութիւնը, իր Հոկ. 17 ին սկսած ձրի գիշերային դպրոցը կը շարունակէ, իր կանոնաւոր փրօկրամով: Դպրոցին մէջ կ'աւանդուին Յորաններէն, անգլիներէն, հայերէն և Թուարանութեան դասեր անդամներու կողմէն: Ներկայիս աշակերտութեան թիւն է 24, որ աւելնալու վրայ է:

Ընկերութիւնս Նոր Գիւղի Հայ Աւետ. եկեղեցւոյն մէջ կիրակնօրեայ դպրոց մը հիմնեց, որ այժմ օրփոխ դաց բաժնին մասնակցութեամբ վերոյիշեալ եկեղեցւոյ շէնքին մէջ իր կիրակնօրեայ հաւաքոյթները կը շարունակէ՝ երկուսն աշակերտութեամբ մը, որուն թիւը ներկայիս 60ի կը հասնի:

Աղջկանց և Տղայոց երկուսն վարչութիւնը 11 ս. ոսկրի գումար մը նուիրեց վերոյիշեալ եկեղեցւոյ դպրոցին նոր վարձուելիք օդնական սուղջուհիի մը ամսականին համար:

Երիտասարդաց բաժինը 3 ս. ոսկր արժող դպրոցական գոյքեր նուիրեց Պիթիասի Հայ Աւետ. եկեղեցւոյ դպրոցին, նաև մէկ տարուայ «Նոր Աւետ.

տաբեր» Եօզուս — Օլուքի մէջ իր հիմ-
նած Զանից Ընկերութեան:

Բ. Յ. Գալֆան

ՓՐՈՑ. Զ. Պէճճեան, որ Հալէպ Գո-
լէճի վարչութեան կիսամեայ ժողովին
մասնակցելու համար Հալէպ կը գտնու-
ուէր, Յունուար 1ի զիշերը Տոքթ. Յ.
Գալֆանի տունը անկողնի մէջ յան-
կարձ սաստիկ անհանգստութիւն մը
կ'զգայ, և անկողնէն ելլելով հազիւ
կրնայ բժիշկին լուր տալ թէ վիճակը:
Հազիւ դարձեալ անկողին մտած փրո-
ֆէսորը կրիտիկական վայրկեաններ
կ'ապրի՝ սիրտը դադրելու վտանգին
մէջ: Բժիշկներու յայտնութեան հա-
մեմատ սաստիկ պաղտոութեան մը
պատճառաւ երիկամունքը կը դադրին
բնականոն գործելէ և յետքննութեան
յայտնի կ'ըլլայ որ մէզը կը բաղկանայ
գրեթէ միայն բնասպիտէ (*keratinized*),
որ արիւնը թունաւորելով ազդած է սըր-
տին: Բժիշկները անմիջապէս երկու
անգամ արիւն կ'առնեն եւ միզային
փամփուշտը արուեստական կերպով կը
պարպեն, և պէտք եղած դարմանումնե-
րը կը կատարեն: Յաջորդ օրը երիկա-
մունքը կ'սկսի բնական կերպով գոր-
ծել: Տոքթորներ Ա. Ա. Ալթունեան,
Ֆ. Յովնանեան, Ա. Ճէպէճեան և Գալ-
ֆան ոչ մէկ ջանք չեն խնայեր փրո-
ֆէսորին հանգիստը վերահաստատելու
համար: Ուրախ ենք որ մէկ երկու օր
ետքը փրոֆէսորին անկողնէն ելլելը
յուսաւի է:

BIBLE LANDS' AID SOCIETY անուն
միսիոնարական կազմակերպութիւնը
Մ. Արեւելքի Հիմնարկութեան միջոցաւ
Պէյրութ շրջած է հանգերձներ, որոնց-
մէ հինգ սնտուկը Հալէպի Հայ Ազգ. Կ.
Խաչի կողմէ Ծնունդի առթիւ բաշխուած
է կարօտներուն. այս հինգ սնտուկնե-
րէն մէկն ալ հալէպէն Աղեքսանդրէթ
ղրկուած է:

ՍՈՒՐԻՈՅ Երեսփոխանական Ժողո-
վին համար Հալէպէն ընտրուեցան 2
Հայ Առաք. և մէկ Հալ կաթողիկ ան-
դամներ:— Տիարք Ջրաչ Փափազեան
(դաշնակցական), Նիկոլա Ճանճի և
Հանրի Հինտլի:

ՆԻՒ ԵՕՐՔԻ ԵԿԵՂԵՑԻԻ ԿԵԱՆՔԷՆ

Այս եկեղեցին մեքենայի պէս լար-
ուած շատ կանոնաւոր կը գործէ: Սմէն
եկեղեցիի սովորական ընկերութիւննե-
րը հոն կան արդէն: Կանանց օժան-
դակ մարմին, Այրերու եղբայրակցու-
թիւնը, ու երիտասարդաց ժողովները
սովորականէն աւելի ճոխ են խնճոյք-
ներով և երեկոյթներով:

Այս տարի հատ մը եւս հնարեցին:
Ամիսը անգամ մը՝ մեծագոյն Նիւ Եօր-
քի 4 մասերէն իւրաքանչիւրը յաջոր-
դաբար ընկերային երեկոյթ պիտի տայ
եկեղեցիին վարի սրահը՝ միւս երեք մա-
սերը հիւրընկալելով: Այս կերպով մե-
ծագոյն Նիւ Եօրքի Հայ Աւետ. Եկեղե-
ցիի ժողովուրդը իրարու հետ մասերմա-
ցած ու իրարու այցելած պիտի ըլ-
լան... քանի որ այս մեծ քաղաքին մէջ
զիրար տեսնելու, ու ամէնը տեսնել
կարենալու համար շատ ժամանակ պէտք
է, ու մեծ զոհողութեան կը կարօտի,
ու շատ անգամ ալ անկարելի: Ինչ
լաւ կարգադրութիւն:

Վեր. Ա. Ա. Պէտրիկան յիրաւի մե-
քենայի պէս լամպն կողմ հասնելու կ'աշ-
խատի. միշտ լարուած է: «Աւետա-
րանչականի ոգին է, «ճրագ» ամսաթիւ-
թը ու եկեղեցիին շաբաթական «թիւ-
թիկը» իր ձեռքէն ու մտքէն կ'ելլին:

Ամիսը անգամ մը կ'երթայ Նիուար
N. S. քաղաքի: Ամիսը երկու ան-
գամ Նիւ Եօրքի վերի թաղը՝ նոր տեղ
մը կը քարոզէ, և կ'ուզէ հասնիլ ամէն
պէտքերուն: Առեւտրական ասպարէզը
թէ և կեցած է, սակայն եկեղեցիին մէջ
միշտ գործ կայ:

Եկեղեցին բացառիկ ծախքով 1500 տոլար բաց մը պիտի ռենենար այս տարի: Թէեւ այս տարուան եկեղեցիին հասոյթը՝ հակառակ առեւտուրի նուազութեան՝ աւելի եղած է, սակայն ըստիպողական բացառիկ ծախսի պատճառով 1500 տոլար բացով պիտի գոցուէր տարին: Ազօթաժողովի բերամամբ գացի և տեսայ որ եկեղեցիին բոլոր խորհրդատուներն ալ հոն էին կազմ ու պատրաստ: «Ահա Փաւր հառադը ըսի: Այսպէս եկեղեցիին շուրջ բոլորուող պատրաստակամ խորհրդականներով անշուշտ եկեղեցիին կանգուն կը մնայ ու յառաջ կ'երթայ. քանի որ միշտ կազմ ու պատրաստ են իրենց երէցին օգնելու, անոր թեւերը վեր բռնելու:

Ճարը գտած էին, բացառիկ երեկոյթով մը այդ բացը գոցել որոշեցին: Ծախելու տոմսերը բաժնեցին: այդ իրիկուն արդէն 6—700 տոլար գումար մը ապահովուած էր:

Ահա տիպար եկեղեցի մը, կազմակերպութիւնը լաւ է, մեքենան լաւ կը գործէ. անշուշտ անոր եղն է սէր, որ է Աստուծոյ Սուրբ հովիին շարժիչ ոյժը:

Կ. Պ. Ա.

ԼՈՒՐԵՐ ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑԻՆ

Ամանորի Պաշտամունքը.— Սկսաւ ժամը (7.00) ին առաւօտուն: Եկեղեցին հոժ բազմութեամբ մը լեցուած էր: Օրուան բանախօսներն էին հետեւեալները.—

1. Վեր. Ա. Շիրաճեան նախ կարգաց կարճ և իմաստալից ոտանաւոր մը, ապա ջանաց պատկերացնել 1931 ը ցոյց տալու աշխատելով անոր յաջողութիւններն ու ձախողութիւնները, քաշած տառապանքները և վայելած բարիքները: Նաեւ յիշեց անոր 1932 ին տալիք յորդորները:

2. Տոքթ. Ա. Ճէպէճեան խօսեցաւ նիւթ ունենալով «Տիեզերքի երկու

ծայրերը»: Ասոնք են երկնային ահագին մարմինները և հասարակ աչքի անտեսանել մանրէները: Մարդս, ըսաւ ան, այս երկուքին մէջ ամենակարեւորն է և ան պէտք է իր զիրքը ճանչնայ Աստուծոյ հնազանդ և հաւատարիմ մնալով:

3. Մր. Էմքինյ Ա. Կորնթ. 1. 24 ը բնաբան ընտրելով խօսեցաւ: Շեշտեց թէ Յիսուս Քրիստոսի ազդեցութիւնը աւելի զօրաւոր ըլլալուն համար մենք անոր հնազանդելու և հաւատալու ենք:

Մր. Ծննդեան Պաշտամունքը.— Սկսաւ ժամը (7.00) ին առաւօտուն: Քարոզեց Վեր. Կ. Յ. Յարութիւնեան բնաբան ունենալով «Ես Դաւիթի արմատը ու յեղն եմ ու առաւօտեան պայծառ աստղը»: Յայտն. 22. 16. Ներսէս, Ղեւոնդ և Մինաս եղբայրներու երգած «Սորհուրդ Մեծ և Սքանչելի» և «Այսօր Տօն է Ծննդեան Աւետիս» չարականները, պաշտամունքը աւելի վեհացուցին: Մեծ բազմութիւն մը ներկայ էր: Երկու պաշտամունքներուն ալ ժողովուրդին մասնակցութիւնը, եղած հանգանամութեան, ամէն զնահատանքէ վեր էր:

ԹՂԹԱԿԻՑ

Գ. ՀԱՅ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻԻ ԿԵԱՆՔԷՆ, ՀԱԼԷՊ. Նոր Տարուան պաշտամունքին առթիւ խօսեցան Տիար Մ. Պալիկեան, Տոքթ. Ա. Ապուհայաթեան և Վեր. Հ. Հ. Բիկզ, նիւթ ունենալով՝ կարգով՝ մեր առաջնորդը, խաղաղութեան հիմը, և լաւատեսութիւնը: Ծնունդի պաշտամունքին առթիւ քարոզեց Պատ. Յ. Չազմազճեան: Երկու պարագաներուն ալ ժողովուրդը սովորականէն աւելի խոնուած էր, և հակառակ տնտեսական նեղութեան՝ մօտ 25 սուրիական օսկի նուէրներ եղան: Կիրակի առտուան պաշտամունքէն ետքը եկեղեցիի երեք ու կէս ամսուան տեղեկագրութիւնները

տրուեցան բեմէն զատ զատ Խառն Ժողովի, Այցելու Մարմնի, Կոնսնց Օժանգակի, Մանկանց Կ. Դպրոցի և հովիւի կողմէն և Մշակութային ու Աւետարանչական յանձնախումբերու մասին: Վերջին երկուքին տտեմապետներն են՝ Կարգով՝ Տոքթ. Ա. Ապուհայաթեան և Մր. Ա. Քարլթըն: Երեք աւելի մամուլական ընդհանուր պիւսճէն եղած է աւելի քան 300 սուրիական տակի, որ զայսցած է միայն ժողովուրդին նուէրնիրովը: Ներկայիս 65 ընտանիքներէ կը բաղկանայ ժողովուրդը: ԹՂԹ Ակիճ

ԻՄՄԱՆՈՒԷԼ Հայ Աւետ. եկեղեցիի (հալէպ) ժողովուրդը կիրակի առաւելան պաշտամունքէն ետքը յիտ խորհրդակցութեան և Խառն Ժողովի բերած առաջարկին վրայ որոշած է Վեր. Սիրահան Աղապետանը իբր հովիւ հրաւիրել: Վեր. Ս. Աղապետան ներկայիս Նիկոսիոյ (Կիպրոս) Հայ Երիցական եկեղեցիին հովիւն է, և 1914ին շրջանաւարտ եղած է Մարաշի Աստուածաբանականէն:

ՕՐ. ՄԱՐԻ ՊՈՏՈՒՐԵԱՆ, որ հերու Յուլիսին Վենետիկի երաժշտանոցէն քննութեամբ փրօֆէսորուհի վկայուած էր, նոյեմբեր 4ին իր առաջին նուագահանդէսը տուած է երաժշտանոցին մեծապոյն սրահին մէջ. յօգուտ հաստատութեանս ազգայն աշակերտներուն: La gazetta թիւթը, հեղինակաւոր արտահատազէտները իրենց հիացումը յայտնած են Օր. Պոտուրեանին՝ փառաբանելով տնոր տապանը: Ամէն կէսօրէ վերջ տենդագին ծափահարութիւններ եղած և ծաղկեփունջեր նուիրուած են, անթուալի անգամներ բեմ կտնցուելով:

ՊՐԻՆՍԷԼԱՐՆԱԿ Ա. Մարդեան 50000 ֆրանք, Մ. Մարդեան 30000 ֆր. Դ. Մարդեան՝ 20000 ֆր. նուիրած են Հայաստանի ներգաղթելու համար: Նոյն նպատակի համար 20000 ֆր. ևս հանգանակուած է հայ գաղութիւն մէջ:

ՊԸՆԵՆ—ԺԸՆԵԻ Հայ Դպրոցին Ի նպաստ՝ Զուրիցիոյ հայաստէրներու կոմիտէին կողմէ Տիար Ն. Պէկեանի, Տիկ. Վ. Պէկեանի և Տիար Յ. Ս. Ֆէրմանեանի պաշտօն տրուած էր Մ. Նահանգաց Հայոց մէջ հանգանակութիւն մը կատարել: Առաքելութիւնը իր պաշտօնը կատարած ըլլալով Հ. Կոչնակի մէջ իր մէկ տեղեկագրով կը յայտնէ թէ կրցած է 4651 տղար հանգանակել, որ կը յուսայ թէ 6000ի պիտի բարձրանայ տրուած խոստումներով: Այս պուժարով կարելի պիտի ըլլայ գործոյն 1931 տարուան պիւսճէի բացը փակել:

ՓՐՈՖ. Ն. ԴԱՄԱԼԵԱՆ, ամբողջ Խորհրդային երկրին մէջ գնահատուած գիտնական մը, Երեւան հասած է հոն պատրաստելու համար կարգ մը էլեմենտարութիւններու բուժումին համար ներարկիչ դեղեր:

ԴԵԿՏԵՄԲԵՐ 20, 1931, Գիրակի օրը կէսօրէ ետքը ժամը 2,30ին, Պէյրութի Աւետ. Ա. եկեղեցւոյ Երիտասարդաց Քրիստ. Զանից Ընկերութեան վեցերորդ տարեկարծը կատարուեցաւ՝ նախագահութեամբ Պատ. Յ. Աբգարեանի: Ընկերակցութեան օկիգրէն մինչև հիմա նախագահութեան պաշտօնը վարած անձնաւորութիւններ կարգաւ բեմը հրաւիրուեցան իրենց պատգամ տալու համար: Առաջին նախագահ և հիմնադիր Վեր. Ս. Մանուկեան՝ Հալէպէ զրկած իր գրութիւնովը Զանից Ընկերութեան ուշադրութիւն ընկիւք երեք կէտերը մատնանշած էր: Երկրորդ նախագահը Տիար Ճ. Կոյճակեան խօսեցաւ նիւթ աւնեւորով «Զանից Ընկերութիւնը 5 տարիներու ընթացքին գործ կատարած էր: Երրորդ նախագահը Տիար Բ. Գրիգորեան խօսեցաւ նիւթ ունեւորով, «Ոչխար մը մարդէ աւելի արժէքաւոր է»: Զորքորդ նախագահը Տիար

Յ. Պուճիգանեան զրօթիւնով մը Ըն- և Տիարք Տ. Քասունի և Բ. Կիւլէսէր-
կերութեան մի քանի թեւազրօթիւն- Կան երգեցին :
ներ ըրաւ : Հինգերորդ և ներկայ նա- Մէկուկէս ժամ տեւող հանդէսին
խաղահը Տիար Ե. Տէր-Մկրտիչեան «Ե- հոգեւոր մթնոլորտը զգալի էր : Բոլոր
լի՛ր ընկեր» խորագրով ոտանաւոր մը ներկաները լաւ տպաւորուած բաժ-
կարդայ : Նուագիցին Տիարք Գ. և Յ. նուեցան Վեր. Ե. Կէօքէօզեանի օրհ-
Պուճիգանեաններ, Կիթարի վրայ ա- նութեան աղօթքէն ետքը :
ռանձինն նուագից Տիար Տ. Խնդրունի, Ե. Տէր-Մկրտիչեան



Դ Ե Ր Ձ Ա Կ

ՅԱԿՈՒ ՄԻՍԻՐԵԱՆ

ԿԸ ԳՈՀԱՅՆԷ ԱՄԷՆԷՆ

ՆՐԲԱՃԱՇԱԿ ՏԻԿԻՆՆԵՐՆ

ՈՒ ՊԱՐՈՆՆԵՐԸ

ՈՒՆԻ ՆԱԵԻ

ԱՐԴԻԱԿԱՆ ԿԵՐՊԱՍՆԵՐՈՒ

ՃՈՒ ՄԹԵՐՔ

Վստահելի անձերու հետ ամսավարով
գործառնութիւն կ'ունենանք:

FURST McNESS Ի ԱՌՈՂ-ՋԱՊԱՀԱԿԱՆ

ԳԻՄԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նշանաւոր են իրենց մաքրութեամբն

ու շինիչ ազդեցութեամբը,

աւստի

անարիւններ, տկարներ, հիւանդութենէ և վիրաբուժական գործողութենէ
նոր ապաքինողներ, պէտք է գործածեն**Furst mcness cod liver oil extract**կոչուած բաղադրութիւնը, որ կը պարունակէ մաքուր ձկան իւղ (կենսահիւթ
«Ա» և «Դ»), մալթ, վայրի կեռաս, քիւի, ընտիր գինի, երկաթ, մանկանէղ,
և այլն:Մեծապէս ԱՆՈՐԺԱՀԱՄ է, ԱՐԻՆԻ ԿԱՐՄԻՐ ԳՆԴԻԿՆԵՐԸ ԿԸ ԶՕՐԱՑՆԷ
ընդհանուր ՄԱՐՄՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԿՈՒԺՈՎՅՆԷ:**ՀԱՋ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՆՈՒԿՆԵՐ ԵՒ ԶԱՓԱՀԱՍՆԵՐ**

պէտք է գործածեն

Mcness mentholated cough syrup

Բաղադրութիւնը,

կը պարունակէ զանազան ծառերէ, բոյսերու արմատներէ քաղուած հիւթիւր և
մենթոլ:Բորբոսած եւ գրգռուած կոկորդի բաղանքներում վրայ կ'ազդէ, կոկորդը եւ
խոչափողը կը մաքրէ եւ «կ'իւղոսէ»: Ախորժառամ եւ անուշ է:

ԿԸ ԴՏՆՈՒԻ ԲՈՂՈՐ ՅԱՅՏՆԻ ԴԵՂԱՐԱՆՆԵՐԸ

 صاحب الامتياز والمدير المسئول القس ق. هاروتونيان
